



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



82  

---

9-80

1237

1863

2011






82-2

Ֆ-76

ՖՅՍՍԹ ԵՒ ՄԱՐԿՐԻՏ

ԹՄՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ



ԹՄՐԳՄԱՆԵՍՅ

ՅԱՆԳՂԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԷ

ՅՈՎՅԱՆՆԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ ԹԻԻ 13

— 1863 —





ՕՂ  
\$-80

My

ԵՍՍԹ ԵՒ ՄԱՐԿԻՆ  
ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ



ՅԱՆԳՂԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԴՐԷՍՍԵԱՆ

1001  
315 P



2003

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄԱՄ — ԱԱԼԻ ԽԱՆ, ԹԻՒ 15

( 1863 )

8 416

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

« Այն ուսմունքն օգտակար ու  
բարի է՝ որն որ ժողովրդեան  
ճաշակն ու բարքը հրահանգե-  
լու կը ծառայէ » :

Այս դրութեամբս չենք կարծեր բարոյական  
սկզբանց հակառակող գտնուիլ : Ժողովրդի մը  
բարքն ու ճաշակն հրահանգելու՝ անտարակոյս իւր  
բարոյական յատկութեանցը վրայ ազդեցութիւն  
մը ունենալով կրնանք յաջողիլ : Անուրանալի ճշ-  
մարտութիւն մ'է՝ որ գեղեցիկ դպրութեանց ճա-  
շակն ազգի մը մէջ տարածելն՝ զարգացման առա-  
ջին եւ դժուարին քայլն առնելն է : Շատ բանա-  
սէրք, գեղեցիկ դպրութեանց զօրութիւնն ազէկ  
ճանչնալով ըսին թէ, « Բանասէրք իրենց ազգու-  
գրութիւններովն աւելի սրտից իշխեցին, քան թէ  
հզօր աշխարհակալք իրենց զօրաւոր բանականերովն  
բիւրաւոր երկիրներու : Ըսածներնէս կը հետեւի  
թէ ազգի մը բարոյական յառաջագիւտութեան ա-  
ռաջին եւ գլխաւոր սլացմաններէն մին ալ բանա-  
սիրութիւնը կրնայ համարուիլ, որուն դժուարին  
եւ երեւելի ճիւղերէն մէկն ալ նաեւ թատրերգու-  
թիւնն է. եւ իրաւամբ՝ թատրոններն հասարակաց  
բարւոյն, զգացման եւ ճաշակին նուիրեալ ճեմա-  
րաններն կրնանք կոչել, ըստ որում ժողովուրդք  
հոն յաճախելով, բարի զգացմանց եւ դիւցազնա-  
կան առաքինութեանց անձնաւորեալ իրականու-  
թիւնը զգալապէս կը նկատեն :

Խիստ մօտ ստեաններս կը տեսնենք որ՝ մեր  
Ազգն ալ ինչպէս միշտ բարեաց հետեւող, եւ

Թատրերգութեանց օգտից խելամուտ՝ Եւրոպիոց  
անհուն յառաջագիտութեան արմատը զննելով,  
դժուարին եւ իւր կարողութենէն վեր ձեռնար-  
կութիւն մը ըրաւ, այսինքն՝ Արեւելեան թատրոնի  
հաստատութիւնը: Մենք՝ որ ըստ բաւականի Եւ-  
րոպիոց հռչակաւոր քաղաքներն ու թատրոններն  
յաճախած ենք, ճշմարտութենէ չչեղելու համար  
կ'ըսենք թէ Արեւելեան թատրոնը՝ ոչ սակաւ յա-  
ռաջագէտ վիճակի մէջ կը գտնանք իր այժմու դը-  
րութեան մէջ. թէպէտեւ անթերի ըսելն ալ կոյր  
կուսակցութիւն մը կը համարինք:

Մեր նպատակն հոս Արեւելեան թատրոնին  
էութեանը ջատագով կամ ստգտանող հանդիսա-  
նալ շրջալուսն համար, Արեւելեան թատրոնն՝ իւր  
ամեն թերութիւններովն հանդերձ՝ Անձնանուէր  
եւ ազգասէր զգացման տէր եղող անձանց բազ-  
մաւառատակ արդիւնքն ըլլալը կ'ընդունինք, եւ  
այս արդիւնքը տկար Ազգի մը համար՝ բարձր  
ծառայութիւն մը կ'անուանենք եւ անոր յարատ-  
եւութեանն համար թախուած ճիգը՝ վսեմ:

Այսպիսի ազնիւ դիտաւորութեան մասնակից  
ըլլալու փափաքն յորդորեց զմեզ՝ առանց բանա-  
սիրական ճաշակէ զուրկ ըլլալնիս նկատելու՝ ներ-  
կայ թատրերգութիւնն՝ որ մեր օրերն անդդիս-  
կան լեղումաւ շարագրեալ եւ մեծ յաջողութիւն  
դտած է յԱնդդիս՝ թարգմանել ազգային լեղ-  
ուաւ եւ յուսալ որ մեր այս դոյզն երկասիրու-  
թիւնը եթէ ոչ վարձատրութեան՝ գէթ եւ ոչ ար-  
համարհանաց արժանի պիտի դասէ Արդոյ Հա-  
ստատակութիւնը:



ԱՆՁԻՆՔ

ՖՕՍԹ • Շեր բժիշկ :

ՄԵՖԻՍԹՕՖԵԼԵՍ • Սատանայ :

ՎԱԼԵՆԹԱՅՆ • Երիտասարդ զինուորական ,  
եւ եղբայր Մարկրիտի :

ՊՐԱՆՏԸՐ • Զօրական :

ՍԻՊԵԼ • Աղքատ ուսանող , եւ սիրահար Մարկրիտի :

ԱՆՍԵԼՄ •

ՖՐԻՑ •

ԲԻԹԸՐ •

ՈՒԱՆԿԸՐ •

} Ուսանողք :

ՄԱՐԿՐԻՏ • Քոյր Վալէնթայնի :

ՄԱՐԹԱ • Խնամական նորին :

ՃԻՆԵՎԻԵՎ •

ՄԱՏԼԵՆ •

ՀԵԼԵՆ •

ՊԵՐԹԱ •

} Մարկրիտի հասակակից  
օրիորդք :

ԿԵՐԴՐՈՒԴ :

Սուրբ հոգի , խմբեակն սատանայից , քաղաքացիք այր եւ կին , ուսանողք :

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Փօսթին գրասենեակը . մեծ պատուհան մը :  
 ՓՕՍԹ սեղանին ձախ կողմը նստած , գլուխը ձեռքերուն  
 վրայ դրած . կանթեղը կը սլալայ . Սթէյճին ճակատը  
 կրակ կը վառի : Երգի ձայն (առանց մուզիկայի) կը  
 լսուի փողոցին մէջ , վարագոյրը չը բացուած .

ԱՇԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

Երիտասարդ ծնունդ տարւոյն ,  
 Գարունն է զուարթ :  
 Միրգն ու ծաղիկ հովասուն ,  
 Իւր շքեղ են զարդ :  
 Մանկունք խլմենք ու երգենք ,  
 Սուղ են մեր օրեր :  
 Կենաց սլարգենն վայելենք ,  
 Գինի խառն ի սէր :  
 Կարմիր այտեր՝ թարմ հասակ ,  
 Ջերմ սիրենք սիրով :  
 Գինուով լեցուին մեր բաժակ ,  
 Տալ կենաց կորով :

ՏԵՍԻԼ Ա.

ՓՕՍԹ առանձին :

ՓՕՍԹ . (ԵԼԷԼՎ) Երիտասարդութիւն ,  
 սէր . — մի՛շտ առ բառերը կը կրկնեն իրենց  
 երգերուն մէջ . (ԻճԲԵՍԿԸ էր շարունակէ . ԵՐԼՍ-  
 ԼՎ Յայտերը էր հեռուստոն — պատահանէն էր նայի)

երջանիկ խեղդեր . տե՛ս ձեռք ձեռքի փողոցն  
 'ի վար կ'երթան . աշակերտք ու իրենց սիրու-  
 հիները — դալար վառվառն սիրտերով ու  
 զուարթ գէմքերով (Խնդալով) հա՛, հա՛, հա՛,  
 խեղճ ծերունի բժիշկ Ծօսթը՛ — ահա քու սի-  
 րուհիներդ — սեւ հաղուսաներով , դեղ ,  
 աստղաբաշխութիւն , օրէնսդրութիւն , հողե-  
 բանութիւն , ա՛հ , (հառաչելով) ես շատ երջա-  
 նիկ գիշերներ անցուցած եմ անոնց հետ —  
 ա՛հ , (դարձեալ սեղանին գլուխը հընարի , երեսը  
 շեռտերուն ձէջն առած) :

ՏԵՍԻԼ Բ .

Նոյնը եւ ՍԻՊԵԼ, կամայ մը ներս կը մտնայ :

ՍԻՊԵԼ . (Ռէհոստի) Ահաւասիկ նստեր կը  
 կարդայ — պէտք չէ որ արգելք ըլլամ իրեն :

ՓՕՍԹ . (առանց տեսնելու) Անտարակոյս երբ  
 աս երիտասարդները պատուհանիս առջեւէն  
 անցնին ու ճրագիս լոյսը տեսնան՝ կ'ըսեն թէ  
 « ահա մեր Ծօսթ ծեր բժիշկը դարձեալ կ'աշ-  
 խատի , հոն առանձին գրքերուն վրայ ծռած ,  
 մինչդեռ ուրիշները քնոյ եւ կամ զուարճու-  
 թեան մէջ են , թշուառ ծերունի » ու իմ վը-  
 րաս խղճալով կ'անցնին կ'երթան :

ՍԻՊԵԼ . (Ռէհոստի) Չեմ գիտեր ինչու , չեմ  
 համարձակիր իրեն հետ խօսելու :

ՓՕՍԹ . Բայց ես ինչո՞ւ այսպէս բաներ կը



մտածեմ, ժամանակը անցեր գացեր է, հիմա  
զղջալը անօգուտ է. երիտասարդութեան հա-  
ճոյից փափաքը սրտիս մէջ կ'արթննայ՝ երբ  
կենաց կանթեղը գրեթէ բոլորովին մարած է :

ՍԻՊԵԼ. (Դողդոջաւով) Տէր դասատու :

ՓՕՍԹ. Ո՛վ է այդ :

ՍԻՊԵԼ. Ես եմ, Սիպել քու աշակերտդ,  
ազնիւ դասատու :

ՓՕՍԹ. (Տարփաստեցաբար) Սիպել, ի՞նչ է ան.  
ի՞նչ կ'ուզես իմ ազնիւ զաւակս :

ՍԻՊԵԼ. Ո՛չինչ. ես . . .

ՓՕՍԹ. (հը նստի) Հո՞տ եկուր, Սիպել'. (Սե-  
պել ոտքի՛ն Տօփիկցած աւուրի ճը շրայ հը նստի) .  
քու մայրդ գրեց ինձի խրկել ուզեց որ ես  
գրեց իբրեւ աշակերտ առնեմ քովս ու փիլի-  
սոփայութիւն սորվեցնեմ :

ՍԻՊԵԼ. Ա՛հ, այո՛, փիլիսոփայութիւն :

ՓՕՍԹ. Շատ գեղեցիկ բան մըն է. մինչ-  
դեռ բոլոր բնութիւնը տերեւներով ու պտուղ-  
ներով կը ծաղկի, մինչդեռ երիտասարդներն  
այ բնութեամբ շքեղազարդ ծառերուն ներ-  
քեւ կ'երգեն ու կը պարեն. փիլիսոփայու-  
թիւնը ինքզինքը չորս պատին մէջ ծածկած  
սորվիլ կամ սորվեցնելու կ'զբաղի :

ՍԻՊԵԼ. Այո՛, տէր դասատու, բայց շատ  
քիրուն է :

ՓՕՍԹ. Այդպէս կը կարծե՛ս դու :

ՍԻՊԵԼ. Ես — ես —

ՓՕՍԹ. Շուտ, զուրցէ ինձի, քու վառվը-  
ռուն բարեկամացդ երգերը քեզի համար ա-  
ւելի սիրուն են, քան թէ իմ փիլիսոփայա-  
կան դասերս. դուն ինձի մնաս բարով ըսե-  
լու կուգաս :

ՍԻՊԵԼ. Չէ՛, չէ՛ :

ՓՕՍԹ. Քեզի գէշ :

ՍԻՊԵԼ. Ընդհակառակն, ես իմ վառվըռուն  
բարեկամներուս, ինչպէս որ դուք զիրենք կը  
կոչէք, ըսի որ՝ ես ձեզի հետ չեմ կրնար գալ,  
մէկ գիշերուան ընկերութեան համար դասս  
պիտի կորսնցընեմ :

ՓՕՍԹ. Որի՞ ըսիր այդ խօսքդ :

ՍԻՊԵԼ. Բարեկամներուս, որոնք այս գիշեր  
Պրն. Լուտերի գինետունը պիտի ժողվուին,  
հրաժեշտի գաւաթ մը խմելու մեր ընկերա-  
կիցներէն մէկուն համար, որն որ վաղը բա-  
նակը պիտի երթայ իր գունդին միանալու  
համար :

ՓՕՍԹ. Եւ ո՞վ է այդ ընկերակիցնիդ :

ՍԻՊԵԼ. Մեր բարեկամը Պ. Վալենթայն :

ՓՕՍԹ. Անտարակոյս, առաքինի անձ մը :

ՍԻՊԵԼ. Մեր ամենէս առաքինի :

ՓՕՍԹ. Ինչո՞ւ իր օրինակին չէք հետեւիր,  
ու անոր պէս զօրական մը չէք ըլլար :

ՍԻՊԵԼ. Ե՞ս :

ՓՕՍԹ . Ինչո՞ւ չէ . աղուոր հագուստ կը  
հագնիս , գեղեցիկ սուր մը ու գլխարկիդ վը-  
րայ ալ երկայն փետուր մը կ'ունենաս . բոլոր  
օրիորդները քու վրագ խենդ կ'ըլլան :

ՍԻՊԵԼ . (խնդալով) ո՛հ . . . :

ՓՕՍԹ . Հէ՛ , աս խօսքս զուարթացուց  
դէմքդ . (Յեռքէն բռնելով) դուցէ դու սիրու-  
հի մը ունիս :

ՍԻՊԵԼ . Սիրուհի՛ :

ՓՕՍԹ . Երիտասարդէ՛ , գեղեցիկէ՛ , զին-  
քը կը սիրե՞ս , երջանիկ ես , շո՛ւտ ըրէ սիրոյդ  
վրայ պատմութիւն մը ըրէ ինծի :

ՍԻՊԵԼ . Քեզի՞ , դասատուդ իմ :

ՓՕՍԹ . Այո՛ , ինծի :

ՍԻՊԵԼ . Չեմ համարձակիր :

ՓՕՍԹ . Իմ սեւ հագուստս ու մոխրագոյն  
մօրուքս կը սոսկացնե՞ն գքեզ :

ՍԻՊԵԼ . Ամենեւին . բայց կարծեմ ինծի չի  
վայլեր ձեր առջեւ այդպիսի բաներու վրայ  
խօսիլ :

ՓՕՍԹ . Իրաւունք ունիս , վասն զի ծերեմ :

ՍԻՊԵԼ . Ուսումնական եւ գիտուն ըսել  
կ'ուզես :

ՓՕՍԹ . Գիտո՞ւն . Սիպել , աշակերտս , դուն  
աւելի գիտուն ես :

ՍԻՊԵԼ . Ո՛հ , տէր դասատու :

ՓՕՍԹ . Բայց ես կ'ըսեմ որ դուն աւելի

խելացի ես . սկսէ՛ , սորվեցու ինձի , ըսէ տես .  
նեմ ի՞նչ է սէրը :

ՍԻՊԵԼ . Սէ՞րը :

ՓՕՍԹ . Սիրուն բան մը անտարակոյս —  
անանկ չէ՞ :

ՍԻՊԵԼ . Այո՛ :

ՓՕՍԹ . Փիլիսոփայութեան չա՛փ սիրուն :

ՍԻՊԵԼ . Ո՛հ , մեծ տարբերութիւն կայ եր-  
կուքին մէջ . այլ է սէրը , այլ է փիլիսոփա-  
յութիւնը :

ՓՕՍԹ . Այո՛ , սէրը աւելի հաճութիւն  
կուտայ :

ՍԻՊԵԼ . Ոչ միշտ :

ՓՕՍԹ . Ա՛հ , կը տեսնեմ , քու սիրունհիղ-  
քեղի երջանիկ չընէր ուրեմն :

ՍԻՊԵԼ . Մարկրիտը իմ սիրունհիս չէ :

ՓՕՍԹ . Մարկրի՛տ :

ՍԻՊԵԼ . Այո՛ , Մարկրիտ է իւր անունը :

ՓՕՍԹ . Ի՞նչ գեղեցիկ անուն :

ՍԻՊԵԼ . Իր աչքերը աւելի գեղեցիկ են :

ՓՕՍԹ . Եւ ինք քու սիրունհիղ չէ՞ :

ՍԻՊԵԼ . Ո՛չ . զիս սիրենն անգամ չմտածեր :

ՓՕՍԹ . Միթէ իրեն հարցուցած չե՛ս :

ՍԻՊԵԼ . Բնաւ չեմ համարձակած այդ մա-  
սին :

ՓՕՍԹ . Իրա՞ն :

ՍԻՊԵԼ . Իր եղբայրը կ'ըսէ թէ՛ Մարկրիտ

օր մը չէ նէ օր մը կարելի է սիրէ դիւ . ուստի  
եւ ալ՝ անհամբերութեամբ այդ օրին կ'սպա-  
սեմ — սխալի չ'ստիպեմ դինքն ինծի հետ  
կարգուիլ :

ՓՕՍԹ . Իրեն հետ կարգուիլ կը խորհիւ :  
ՍԻՊԵԼ . Ուրիշ բանի վրայ բնաւ չեմ խոր-  
հիր եւ չեմ կրնար — դուն ինծի արեւուն ու  
լուսնին վրայ խօսած ատենդ կարծես թէ իմ  
սիրտս ալ կ'ըսէ Մար — կը — ըիտ . ականջներս  
կը բանամ , վիզս կ'երկնցընեմ՝ քեզ մտիկ ը-  
նելու՝ բայց անոր ձայնն է որ կը լսեմ . ման-  
րացոյցիդ մէջէն կը նայիմ այն աստղերը դի-  
տելու , որոնց անունները ինծի կը սորվեցնես ,  
եւ հոն — մինչեւ անգամ հոն իւր փայլուն  
աչքերը կը տեսնեմ , որ երկնքէն իմ վրաս  
կը ծագեն :

ՓՕՍԹ . (կ'եւլէ) Պնա' , դնա' :

ՍԻՊԵԼ . Արդեօք նեղացուցի՞ դքեզ :

ՓՕՍԹ . Չէ' . չէ' . բայց կ'ուզեմ առանձ-  
նանալ :

ՍԻՊԵԼ . Սհաւասիկ ես ալ կ'երթամ :

ՓՕՍԹ . Բարեկամներդ քեզի կ'սպասեն ,  
դնա' միացիր անոնց հետ , զուարճացէք , խըն-  
դացէք , երգեցէք , խմեցէք , պուրացէք որ  
ամբողջ թաղս ձեր ձայնն իմանայ :

ՍԻՊԵԼ . Շնորհակալ եմ :

ՓՕՍԹ . ( Յետոյը Լռութեամբ ) Քիչեր բարի —

դնա՛ զուարճացիր , վաղը պատմէ ինձի աս  
գիշերուան ըրածնիդ . սիրուհւոյդ վրայօք  
դարձեալ կը խօսինք վաղը :

ՍԻՊԵԼ . Երբ որ ուզէք :

ՓՕՍԹ . Փիլիսոփայութենէն աւելի սիրուն  
է սէրը , այնպէս չէ՞ , Սիպել , գիշեր բարի ,  
վաղը :

ՍԻՊԵԼ . Վաղը . գիշեր բարի :

ՏԵՍԻԼ Գ .

ՓՕՍԹ առանձին :

ՓՕՍԹ . Վաղը , վաղը , երջանկութիւն ,  
զուարթութիւն , սէր . եւ ինձի , ո՛հ , աշխա-  
տանք , դքադմունք . ո՛հ , փիլիսոփայացեալ  
խենդ . ո՛հ թշուառ դասատու . ահաւասիկ  
ծերացեր ես՝ առանց մարդկային զուարճու-  
թիւն մը ճանչնալու . ( Բարէանալով ) ծերացեր՝  
առանց երիտասարդութեան երջանիկ զգաց-  
մունքները վայելելու . առանց սիրոյ անուշիկ  
զգուանքներն զգալու . բայց տակաւին պիտի  
ճանչնամ ու պիտի վայելեմ ես անոնք . այո՛ ,  
պիտի կարենամ վայելել թէ որ չարեաց ոգին  
ինձի օգնութեան կանչեմ . ( Կայծակ կը զարնէ ,  
ածայ կը գոռայ , հողճ կ'եւլէ ) հողմը կը սաստկա-  
նայ , ամպերն կը դուան , ո՛հ արդեօք ձայնս  
լսե՞ց , ուր էր թէ այդպէս ըլլար . թող գայ .

դինքը դիմաւորելու համարձակութիւն մը կը  
 դրամ. սատանայ, կ'աղաչեմ քեզի, եկուր  
 օղնել ինձի (Երած շատ-նիւն, կայծակ, ամպոց գո-  
 աւ, հողմ, Յայնք. օրատ-հանը կը Բացուի ու Մե-  
 Քիւն-ՕՔելէս ներս կը Տանէ. Ծօսել զահի Էօրէալ:)

ՏԵՍԻԼ Դ.

ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ ԵՒ ՓՕՍԹ

ՄԵՓԻ • Բարի իրիկուն, տէր բժիշկ:

ՓՕՍԹ • Ո՞վ ես դուն:

ՄԵՓԻ • Ես ով եմ մի', սա ահա խնդալու  
 բան. դուն արդէն կը ճանչնաս դիս. դուն  
 չէի՛ր որ հիմա կանչեցիր դիս. անունս սուիր:

ՓՕՍԹ • Չէ' . . . :

ՄԵՓԻ • Ա՛հ, ամօթ ու նախատինք քեզի, Պ.  
 բժիշկ. դուն հիմա դիս կանչեցիր եւ ես քու  
 ձայնդ արդէն կը ճանչնամ. ասկից 'ի զատ  
 չեմ կարծեր որ դիս դուրս ընես. վասն զի  
 օղը շատ դէշ է, ցուրտ կ'առնեմ. սա վերար-  
 կուս չորցրնեմ:

ՓՕՍԹ • Արակս անցեր է:

ՄԵՓԻ • Ես կը վառեմ, ես շատ աղւոր կը-  
 րակ կը վառեմ. (Նո-բէն Գասաթը կառնէ կրակէն  
 վրայ լեցո-շածին պէս կրակը Ֆէէն կը վառի.) ահա  
 քեզի աղւոր կրակ մը. կարծեմ կրակի պէս  
 ուրիշ աղէկ բան չկայ. եկու, տաքցիր:

ՓՕՍԹ . Ես չեմ մտիր :

ՄԵՓԻ . Բայց երակներդ կը դողան — . ո՛հ ինձմէ կը վախնաս . կը հասկընամ ( կրտսէն քովը կը նստի ոտերը կը սառնէ . ) սակայն ի՞նչ պիտի ընէիր՝ եթէ ինձի սեպհական հագուստովս երեւայի քեզի :

ՓՕՍԹ . Հիմակուան պէս . . . :

ՄԵՓԻ . Ստոյգ է . մինակ խենդերն ու արդաքներն են որ հագուստէն կը վախնան . բայց մեր գործին դառնանք . դուն ինձի կանչեցիր . ըսէ , ի՞նչ կընամ ընել քեզի համար :

ՓՕՍԹ . Եւ ոչ ինչ :

ՄԵՓԻ . Դու կը տարակուսիս իմ զօրութեանս վրայ :

ՓՕՍԹ . Թերեւս :

ՄԵՓԻ . Ըսել է թէ աշխատանքդ պարապ չէ գացեր . բայց ըսէ՛ , ինչո՞ւ համար կանչեցիր զիս :

ՓՕՍԹ . Ինչու համար կանչեցիր :

ՄԵՓԻ . Ի՞նչ կ'ուզես , ոսկի՞ :

ՓՕՍԹ . ( նախաստանօք ) Ոսկի՛ :

ՄԵՓԻ . Դուն ոսկին կ'ատե՞ս . շատ աղէկ . ես քեզի ըսի որ աշխատանքդ պարապը չէ գացեր :

ՓՕՍԹ . Միթէ զիս երիտասարդացնելու զօրութիւնն ունի՞ ոսկին :

ՄԵՓԻ . Ա՛հ , կը հասկընամ . քու մտխրագոյն



մաղերդ գրեղ ասելի կ'ընեն . բայց ես ուրիշ  
մաղ կուտամ քեզի :

ՓՕՍԹ . Կուտա՞ս :

ՄԵՓԻ . Սեւ ու փայլուն մաղեր , երկայն  
կամ կարճ ինչպէս որ կուզես , քու ճաշակիդ  
համեմատ :

ՓՕՍԹ . Իմ երիտասարդութիւնս կրնա՞ս  
եւս դարձնել :

ՄԵՓԻ . Անտարակոյս :

ՓՕՍԹ . Ես ի՞նչ փոխարէն ընեմ :

ՄԵՓԻ . Ո՛հ , ես բնաւ վարձ չեմ ընդունիր ,  
եւ հիմակուրնէ քու ծառայդ եմ , ու գերի  
կ'ըլլամ , եւ յետոյ ուրիշ ատեն մ'ալ դուն ի-  
մինս կ'ըլլաս . ( Ժողէն Լուսն Տը կը հանէ ) օ՛ն  
ստորագրէ՛ , շո՛ւտ , գործի ժամանակ չդան-  
դաղինք . ահա մէկ ըմպելիք մը՝ որն որ մաս-  
նաւորապէս քեզի համար պատրաստեր եմ .  
ի՞նչ , կը մտածե՞ս . ( Խճէտիւ կ'երգէ Ժողոջի  
Ռջ « երիտասարդ ծնունդ տարւոյն » : )

ՓՕՍԹ . Չէ՛ , տուէք ինձի : ( Լուսնը հասնէ )

ՄԵՓԻ . Ստորագրէ՛ . ( Գրէչ ասլով . ) շնորհա-  
կալ եմ , բժիշկ , միանդ ամայն երախտապարտ  
— հիմա իմէ նայիմ . ( Գասլը Փօսթին տուած  
ատեն Փօսթ կը Տրածէ . ) դարձեալ կը մտածես ,  
նայէ ու որոշէ . ( Յետը կ'երկնցընէ , փետարանը կը  
Ժոխուի , Մարկիտ Տաղհանց դաշտի Տը Ռջ պատ-  
հած քնացած կ'երեւայ : )

ՓՕՍԹ . Համ . (հը խմէ — արեւարանը հը Գոցոտի  
Պօսէին շրայի հագոստները հ'իշնան, ու Պօսէ  
հայրատու էրիտասարդ Տը հերեւայ) . ուր է Մարկ-  
ըիտ , ո'հ երթամ տեսնամ զինքը :

ՄԵՓԻ . Երխոտասարդութեան աշխայժը  
ի'նչպէս կը վառի ներսի դիտ :

ՓՕՍԹ . Ո'հ , տեսնամ զինքը :

ՄԵՓԻ . Ինձի հետ եկուր : (Պատերազանն ու  
պատուհաններուն մէջէն անցնելով աներեւոյթ հըլլան :

### ՏԵՍԻԼ Ե .

Փողոց մը , զինետուն մը , որուն առջին բաց է . զինովին  
մէկը տակառ մը սրունքներուն մէջն առած : Հեռուն՝ մէջ  
տեղը եկեղեցի մը . արշալոյսի ատեն ԱՆՍԵԼՄ ու ԲԻ-  
ԹԸՐԹ թուղթ կը խաղան . ՓԻԻՅ խաղին զբաղած . ՍԻ-  
ՊԵԼ ու ՈՒԱԿՆԸՐ գլուխին սեղանի մը վրայ դրած կը  
չնջեն . ՊԲԱՆՏԸՐ դաւաթը վեր կ'առնէ . ամենքը մէ-  
կէն կ'երգեն :

ԲԻԹ . (Բոռ-շէրը նեպելով) Վե'յ :

ԱՆՍ . Ութը . (Ֆրէյ հը խնդայ) :

ԲԻԹ . Տասը :

ԱՆՍ . Տասն երկու :

ՓԻԻՅ . Դարձեալ Բիթըր կորանցուց :

ԲԻԹ . Մէյ մ'ալ պիտի չի խաղամ քեզի  
հետ :

ԱՆՍ . Ինչո՛ւ :

ԲԻԹ . Վասն զի միշտ կը վաստկիս :

ԱՆՍ . Չէ , դուն ես որ միշտ կը կորանցնես :

ՖԲԻՅ . Վնաս չունի . յիշեցէք այն առածը  
որ կ'ըսէ . « խաղի մէջ քնասուողը սիրոյ մէջ  
ապէկ կը շահի » :

ԲԻԹ . Պա՛հ , նոյնպէս սիրոյ մէջ ալ միշտ  
շահաւոր չեմ :

ԱՆՍ . Շահաւոր , ի՞նչ ըսել կուզես :

ԲԻԹ . Ի՞նչ կը կարծես :

ԱՆՍ . Կը համարձակի՞ս ինձի —

ՖԲԻՅ . (հ'արգելէ) Չէ՛ , չէ՛ , կուիւ պէտք չէ :

ՈՒԱՆ . (հ'արբննայ) Չէ՛ , չէ՛ , կուիւ պէտք չէ :

ՍԻՊԵԼ . (հ'արբննայ) Չէ՛ , չէ՛ , կուիւ պէտք չէ :

ՊՐԱՆ . (Զջ իջ հարնայ) Սատանորդ ինքեր , մենք  
հոս կուիւ ընելու համար չենք եկեր , խմելու  
եկեր ենք . խմելու՝ խնդալու՝ երգելու ու զու-  
արձանալու համար :

ՍԻՊԵԼ . Ճշմարիտ է :

ԱՄԵՆԸ . Բայց ինձի նայեցէք — ան սկսու-  
— բայց կուիւ պէտք չէ :

ՊՐԱՆ . Լուեցէ՛ք , իմ երգիս ատեն :

### ԵՐԳ

Քրիստոնէից բոլոր աշխարհն մեզ նման  
Աշակերտներ չունի ինչպէս Գերմանիայն ,  
Դիմօք կայտառ , վառվառն սեւուկ աչերով ,  
Թեւ թեւ մօրուք , երկայնաձիւ պեխերով :  
Փողոցն երբոր անցնինք դառնանք զուարթագին  
Օրիորդներ ծիծաղերես մեզ նային ,  
Նոցին սիրով կարծես սրտեր դո՛հ եղած  
Հապիւ ողջոյն մը նուիրեն սիրուհեաց :

( Ա. Բենք Բէհանց Գասաթեներովնին աւելանին Վրաց  
Էրաթշատ-Ռեան հը պատգուատուին ) :

ԵՐԳ.

Սէրն մեր կրծից մէջ վառեր  
կըրակոտ կայծեր.

Սրտեր ամեն աղջըկանց  
Մեր անշուշտ են գանձ .

Հաճոյք անյադ , հեշտին գեղ ,  
Ո՛վ աշխարհ շքեղ .

Ասլըինք , սիրենք աղջիկներ ,  
Նոյն միշտ երգենք սէր .

Զենք ծերերուն մենք նըման  
Մտեցած մահուան ,

Ոչ իրենց պէս խենդ յիսար  
Մեռնիլ ոգևորառ .

Մենք յար խնդանք ու սիրենք ,  
Խըմենք ու երգենք .

Մահուան մինչեւ մութ ստուեր  
Մած կէ մեր աչեր :

ԽՄԲԵԱԿՆ . Քրիստոնէից բոլոր :

ԱՄԵՆԸ . Կեցցէ՛ք :

ՊՐԱՆ . Տղաք , ինծի նայեցէ՛ք , արեգակն  
խը ճառագայթներն արձկել կ'ըսկսի առանց  
մեր հրամանին :

ՍԻՊԵԼ . Գնա ըսէ՛ այդ արեգակին ող տեղն  
երթայ պառկի :

ՊՐԱՆ . Հա՛ , հա՛ , խեղճ Սիպել , այդ խօսքը  
մեզի ըսելու համար արթնցար — հէ՞ Սիպել  
( շոյելով : )

ՍԻՊԵԼ . Ինծի մի՛ դպչեք :

ՊՐԱՆ . Տղաք, Սիպելը գինով է :

ՍԻՊԵԼ . Ես գինով չեմ, գինովը դուն ես :

ՊՐԱՆ . Ե՞ս — ես բնաւ չեմ գինովնար . ես ամենեւին գինովցած չեմ եւ չեմ կրնար ալ գինովնալ ամենեւին : Մինչեւ անգամ Գերմանիայի Հռենոս գետը գիշեր ցորեկ գինի վազելու ըլլայ, ու ես ալ շարունակ խմելու ըլլամ՝ դարձեալ չեմ գինովնար :

ՍԻՊԵԼ . Հռենոս գինի վազելու ըլլայ հօ՛, հօ՛ :

ՊՐԱՆ . Այո՛, Հռենոսը . գլուխները վար ծռին . (Ուսէնըրի գլուխն է վար լեցուն գաւառը էլ պարպէ) :

ՈՒՆԿ . Կրա՛կ կայ, կրա՛կ կայ :

ՊՐԱՆ . Գետը բարձրացեր է . պա՛հ, փիլիսոփայութիւն, աստղաբաշխութիւն, հանքաբանութիւն, կենդանաբանութիւն, հողերանութիւն . ի՞նչ պիտի ընենք ասոնք, ոչնչութիւն . տղա՛ք, խմենք . շո՛ւտ, Աերդրուդ, գինի բեր :

### ՏԵՍԻՒ Զ .

ԿԵՐԴԻՐՈՒԴ գինի կը բերէ . դաւաթնին կը լեցնեն :

ԿԵՐԴ . Սիպել, ի՞նչ կը մտածէք :

ՍԻՊԵԼ . Վալէնթայնը միտքս ինկաւ — ան ճամբայ կ'ելլայ :

ՊՐԱՆ . Այո՛, քրոջը մտաս բարով ըսէ պիտի

դեռ . թէոր դուն վալէնթայնին տեղը ըլլա-  
յիր անշուշտ Մարկրիտը կը գրկէիր քանի մը  
անգամ կը պագնէիր զինքը . շտակ ըսէ , այն-  
պէս չէ՞ :

ՍԻՊԵԼ . Ո՛հ , անտարակոյս :

ՊՐԱՆ . Ես ալ նայնպէս . ( Գառաւիշը լեցնելով )

Վալէնթայնի կենացը :

ԱՄԵՆԸ . Վալէնթայնի կենացը . ( կը խօսէ : )

ՊՐԱՆ . Մարկրիտի կենացը :

ԱՄԵՆԸ . Մարկրիտի կենացը :

ՍԻՊԵԼ . ( Տէ՛ծ ուրախու-նէած ) Մարկրիտի  
կենացը :

ՏԵՍԻԼ Է .

ՎԱԼԷՆԹԱՅՆ , ՄԱՐԿՐԻՏ ու ՄԱՐԹԱ տունէն դուրս  
կ'ելլեն , առանց գինեատունին մէջինները տեսնելու :

ՎԱԼ . Մնաս բարով , սիրելիդ իմ՝ Մարկ-  
րիտ . ժամանակն հասաւ երթալու , լաւ մը  
ըլլայաւ :

ՄԱՐԿ . Այո՛ , եղբայր իմ :

ՎԱԼ . Սնգամ մ'ալ գրկուինք , սիրելի քոյր  
իմ . մնաս բարով , վասն զի ընկերներս ինձի  
կ'սպասեն :

ՄԱՐԿ . Ե՛րբ պիտի դառնաս նորէն :

ՎԱԼ . Ես ալ աղէկ մը չեմ գիտեր , մէկ  
կամ երկու ամսէն թերեւս :

ՄԱՐԿ . Եա՛տ երկայն ժամանակ :

ՎԱԼ. Մարթա քեզի ընկերակցութիւն  
կ'ընէ մինչեւ իմ վերադարձս :

ՄԱՐ. Անտարակոյս — ձեր մանուկ հասա-  
կէն 'ի վեր կը ճանչնամ՝ զձեզ, ու բուն իմ  
զակըններուս պէս կը սիրեմ՝ զձեզ. այո՛, ես  
Մարկըրիտին վրայ աղէկ հսկողութիւն կ'ընեմ.  
դուք ապահով եղիք, եւ եթէ երիտասարդ  
մը համարձակի —

ՎԱԼ. Այդ մասին վախ չունիմ, Մարկըրիտ  
այնպիսիներէն հեռու կը կենայ. Մարկըրիտ  
ունի իրեն խնամած ու իմ բարեկամս Սիպել :

ՄԱՐ. Սիպել՛ :

ՎԱԼ. Թշուառ երիտասարդը զքեզ ան-  
կեղծարար կը սիրէ :

ՊՐԱՆ. Մի՛ քնանաք, արթնցէ՛ք, խմեցէ՛ք :

ՎԱԼ. Մնաս բարով Մարկըրիտ. — բարե-  
կամացս ձայնը կը լսեմ :

ՄԱՐ. Երթաք բարով, սիրելիդ իմ Վա-  
լէնթայն, անվտանգ դարձիդ աղօթող պիտի  
ըլլամ : ( Եկեղէցին ճառովը ցո-ցնէլով : )

ՊՐԱՆ. Օ՛ն հապա, Վալէնթայն :

ՎԱԼ. Ահաւասիկ ձեզի հետ եմ բարեկամք :

ՊՐԱՆ. Արթնցէ՛ք աղաք, ահա Վալէնթայն :

ԼՄԵՆԸ. Օ հօ՛, Վալէնթայն. ( ամենք էլ  
Բարե-են շինք . )

( Երաժշտութիւն . ներս էլ ճանչնալու ժամը — Սե-  
ֆիւռօֆէլէս : )

1001  
315

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԱՎԱՆ  
7/11/1982

ՏԵՍԻԼ Ը.

Նոյնք, ՖՕՍԹ և ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ.

ՄԵՓԻ . (Պօստիֆն) Եւ ոչ մէկը կրնայ դքեղ ճանչնալ — երիտասարդ ասպետի, եւ իբրեւ աղետական տոհմէ մէկու մը կը նմանիք, ո՛հ, ես ասանկ բաներու աղէկ դիտողու թիւն ունիմ : Շատ այսպէս մարդիկներ կան, որ իմ մտերիմ բարեկամներս են :

ՖՕՍԹ . Խոստացար որ Մարկըրիտին հետ տեսնուիմ :

ՄԵՓԻ . Ամեն բանի վերջը բարի պէտք է ըլլայ, բժիշկ, աճապարելը միշտ փաստակար է :

ՎԱԼ . (Գինեփան Ռջ Սեպեւէն է՛լսէ .) Ինչպէս որ ես կը նայէի, այնպէս նայիս . հող տանիս Մարկըրիտի վրայ . Սիպել, քեզի կ'ապաւինիմ :

ԱՄԵՆԸ . Ամենուս ալ կրնաս ապաւինիլ, Վալէնթայն :

ԲԻԹ . Մարկըրիտ մեր քոյրն է :

ԱՄԵՆԸ . Մեր քոյրը :

ՍԻՊԵԼ . Չէ՛, իմ քոյրս չէ՛ :

ՊՐԱՆ . Եթէ ես ալ քեզի հետ երթալու միտք չունենայի՝ ես իմ վրաս կ'առնէի աստ պաշտօնը, եւ ան ատեն սատանան ինքը անդամ չէր կրնար մտենալ Մարկըրիտին :

ՄԵՓԻ . (Գինեփանը Տօբենալու) Իմ անունս



չէր որ լսեցի . եթէ ձեզմէ մէկը զիս կ'ուզէ  
 նէ՛ շատ հեռու չեմ, հոս ձեր քովիկն եմ,  
 դիտցած եղիք . (եկեղեցոյն զանգակները կ'սկսէն  
 զարնել) ո՛հ, չեմ կրնար լսել ես այդ ձայնե-  
 րը, ես կը գարշիմ զանգակներուն ձայնէն :  
 (Քաղաքացիք, Տարդիկ, հանաչի, որպէս եւայլն հար-  
 փա- կ'անցնին եկեղեցի կ'երթան . — Երաժշտութիւն  
 — Ծօռն անոնց երէ-էն կ'երթայ : ) Բժիշկ, ո՛ւր  
 կ'երթար :

ՓՕՍԹ . Սիրտս ինձի կ'իմացնէ որ՛ Մարկ-  
 րիտ հոն է (եկեղեցին ցո-ցնելով) երթանք :

ՄԵՓԻ . Ո՛չ, շնորհակալ եմ, ես չեմ երթար .  
 թէ որ դուն կ'ուզես՝ ներս մտիր, ես դուռը  
 կ'սպասեմ քեզի : (Ծօռն եկեղեցին կը հարնայ,  
 զանգակի շայն . Վալենթայն որտէ կ'ելլէ ձեռնելու :)

ՊՐԱՆ . Ձէ՛, չէ՛, չենք թողուր . դաւաթներ  
 նիս լեցուն լեցուն չենք կրնար ձգել ու եր-  
 թալ : Մարկրիտի կենացը :

ԱՄԵՆԸ . Մարկրիտի կենացը :

ՄԵՓԻ . (պատուհանէն Տօբէնալով) Արդեօք  
 ո՞վ է ձեզմէ ամենէն մարդասէրը, ինձի ալ  
 դաւաթ մը տարու համար :

ՊՐԱՆ . Ինչո՞ւ համար :

ՄԵՓԻ . Որպէս զի ես ալ կարենամ Մարկ-  
 րիտի կենացը խմել :

ՎԱԼ . (որտէ ելլելով) Սիրարտաւա՛ն, ո՞վ  
 ես դուն :

ՄԵՓԻ . Ձո՛վ որ կ'ուզէք , բայց կը վիտիա-  
քիմ՝ ձեզի հետ խմելու , եթէ ներուի ինձի :

ՊՐԱՆ . Մենք միայն մեր բարեկամաց հետ  
կը խմենք :

ՄԵՓԻ . Ես ալ չափազանց ուրախ պիտի  
ըլլամ ձեր բարեկամութիւնը վաստկելով :

ՊՐԱՆ . Ես դքեզ չեմ ճանչնար :

ՄԵՓԻ . Բայց օր մը պիտի դայ՝ որ դիս պի-  
տի ճանչնաս , ազնիւ Պրանտրը :

ՍԻՊԵԼ . ( ոտքի է'ելլէ ) Ինչպէս քու անունդ  
գիտէ :

ՄԵՓԻ . Բուկինդ ալ գիտեմ , ազնիւ Սի-  
պելս :

ՍԻՊԵԼ . Իմս ալ , առ մարդը կախարդ է ,  
ի՞նչ է :

ՓՐԻՅ . Սիպել , այդ մարդուն գաւաթ մը  
դինի տուր : ( Աս մշտնապէս ասէնքն ալ գինեգործնէն  
դո՛ւրս է'ելլէն և աստուղ կուգանն : )

ՄԵՓԻ . Գաւաթ մը միայն , մնաս չունի :  
( Դարե՛ն վրայ է'ելլէ , Գաստըր ասէնքնն ասէր էր  
էր Բո՛նէ , ու վրան էրէք անգամ էր զարնէ . ) քե՛զ  
նայիմ , պարոն Պաքոս : ( Գինէն է'սկսի վազել  
իւր Գաստըրէն մէջ . )

ՍԻՊԵԼ . Աս մարդը սատանան է :

ՄԵՓԻ . Բարեկամ , ձեր կենացը . ( Կը ետէ : )

ՊՐԱՆ . Աս խաղ մը խաղաց մեզի . տակա-  
ռին մէջը գինի կայ . — հոս նայեցէք ( Դարե՛ն

Վրայ հ'ելլէ) քեզ տեսնեմ, պարոն Պարոս .  
(ՄեՔիսի ըրածնէրոնն նճանո-նի-նը հ'ընէ . —  
Գիւնի շ'լապէր) ոչի'նչ :

ՄԵՓԻ . Դուն այս խաղը չես դիտեր . ( Դու  
բն Վրայ հ'ելլէ , ու առ-ջի անգամնն պէս արա-  
նն Վրայ իը զարնէ . Գիւնին իը շ'ապէ , Ռանգամայն  
հրահի հայծեր իը ցարահի Պրանարբի աչի'ն . ) հա' ,  
հա' , հա' :

ՊՐԱՆ . Թշուառակա'ն , դժսխք կըլլեն ըզ-  
քեզ , աչքս կուրցուցիր :

ՄԵՓԻ . Իմ յանցանքս չէ . Մարկրիտին  
կենա'ցը :

ՎԱԼ . Ես չեմ ուզեր որ իւր անունը բե-  
րանդ առնես . ( Յեռ-ի'ն զարնէլոնն պէս Գա-  
նի'նն , ՌՂի Գիւնին հ'ակըսի շ'առ-իլ ու Գե-  
տի'ննէրը այրիլ . աշահերանէրն հեռ-ու-  
հեռ-ու- իը Գա-նի'նն : )

ՄԵՓԻ . հա' , հա' , հա' , հա' :

ՊՐԱՆ . Բռնեցէ'ք սա անպիտանը . (աշահերոս  
ՄեՔիսի-ՌօՔեւէսի Վրայ իը յարձակն , ՄեՔիսի-  
ՌօՔեւէս Յեռ-իլ երկնցո-ցածին պէս՝ հեցած  
բեղերնին անշարժ իը քանն : ) Ա՛հ , հասկցայ , ես քեզի  
հետ գլուխ պիտի չկարենամ ելլել :

ՍԻՊԵԼ . Թող որ երթամ ես , արձկէ թե-  
ւերս . ( ՄեՔիսի-ՌօՔեւէս հ'երկնցընէ Յեռ-իլ ,  
աշահերոս հ'արձակնն : )

ՄԵՓԻ . Ո՛հ , աս ի'նչ է որ կը տեսնամ :

ՊՐԱՆ . Իմ ձեռքի'ս մէջ :

ՄԵՓԻ • Ա, յո՛ւ . — օր մը աս ձեռքդ չարիք  
մը պիտի դորժէ :

ՊՐԱՆ • Ի՞նչպէս :

ՄԵՓԻ • Գուն շատ կիրքոտ մէկն ես , զօրա-  
կանութեան մէջ դժուարութիւններ ալ շատ  
կան , դուն օր մը քու մեծ զօրավարդ պիտի  
զարնես , եւ ութը օր ետքը . . .

ՊՐԱՆ • Բէ՛հ .

ՄԵՓԻ • ( Սեպեւե՛ն յեռո՛ւն է՛նէն է՛նէն . )  
Մխիթարուէ՛ , Միպել ալ քեզի պէս դժբաղդ  
պիտի ըլլայ :

ՍԻՊԵԼ • Ե՛ս ալ , ի՞նչպէս :

ՄԵՓԻ • Ան ամեն ծաղիկները , որոնց աս  
ձեռքդ դպչի , իսկոյն պիտի չորնան :

ՍԻՊԵԼ • Ամենեւին չեմ հաւատար :

ՄԵՓԻ • Բայց վաղը երբ Մարկրիտի համար  
փունջ ժողվելու երթաս , պիտի տեսնաս :

ՍԻՊԵԼ • Մարկրիտի՛ համար :

ՎԱԼ • Դարձեալ քոջս անունը կուտայ :

ՄԵՓԻ • Ա՛հ , մոռցայ բարեկամ . ( Յեռո՛ւն  
Բե՛նէլու շո՛ն է՛նէն է՛նէն , Վալէնթիանո՛ն է՛նէն . ) կը  
վախնա՛ս :

ՎԱԼ • Կը վախնամ մի՛ , ահա՛ . ( Յեռո՛ւն կու-  
տայ . )

ՄԵՓԻ • Ո՛հ , կը ցաւ իմ ըսելու , որ քիչ օրէն  
մէկը՝ որ այս միջոցիս մեզմէ շատ հեռու է ,  
պիտի մեռցնէ զքեզ :

ՎԱԼ . Գնա՛ բանդ :

ԱՆՍ . Բարեկա՛մք , թող տանք որ երթայ :

ՊԲԱՆ . Չարագուշա՛կ բու :

ՖԲԻՅ . Չարեաց աւետող :

ԱՆՍ . Շինծու ճարտար :

ԲԻԹ . Վհո՛ւկ :

ՍԻՊԵԼ . Աչքախար :

ՄԵՓԻ . Մնաք բարով , բարեկամք , մնաք բարով , դարձեալ կը տեսնուինք . յուսամ որ ես ալ կարող պիտի ըլլամ որ մը ձեր հիւրասիրութեան փոխարէն հատուցանել : Ա՛հ , այս երիտասարդներն ալ բանի մը չեն հաւատար . մարդուն առուտուրը . . . ( զանգահի ջայնի կը լսուի ) աս դժոխային զանգակներն ալ ( ահանջները գոցելով . — Ծուռ էհեղեղէն հոգայ , զանգահներու ջայնի կը լսուի մինչև արարուածին վերջը . ) Ա՛հ , բժիշկ , եկա՛ք , երթանք :

ՓՕՍԹ . Չէ , ես հոս պիտի կենամ , Մարկրիտ հոն է , իրեն պիտի սպասեմ . — ես տեսայ սեղանին առջեւ ծնկան վրայ դալը , եւ առանց ձայնի իրեն մօտեցայ :

ՄԵՓԻ . Կամաց կամաց քալելով . . .

ՓՕՍԹ . Ահաւասիկ կուգայ :

( Երածչարուի-ն է էհեղեղայն զանգահները կը լսուին — Բաղճարուի-ն է էհեղեղէն դուրս էլլեն , որոնց մէջ կը տեսնուին Մարկրիտ է Մարկոս , որոնք Ծուռին ու Մեֆիսթօֆելէսին քովէն հանց-

նին — Փօսթ կ'առաջարկէ Մարկրիտին որ զինք  
սրտան սասնի չգէ (պէտք է զած շարժմանք ընելով :)  
Մարկրիտ յանձն շատնուր , Բեպէտե կերպով Տը կը  
յայտնէ որ եր Վրայ Տրածո-Բի-ն Տը ունի — Մե-  
ՔիսթօՔիլէս կորստու-ելով Տը եր Բե-ը կ'երկնցընէ  
Մարկայի որ Բե-ը Տրնէ , Խ ան ալ նոյնպէս կը  
Պերժէ . Տէկընէն- Խոնարհո-Բի-ն ընելով Մարկրիտ  
Խ Մարկաս սո-նէն ներս կը Տրնէն . — Փօսթ կը  
Տնայ , Մարկրիտի Երե-էն նայելով . ՄեՔիսթօՔիլ-  
լէս քարի Տը Վրայ Ելած Փօսթին Վրայ կը նայի . քա-  
ղաքացիք Եկեղեցիէն կ'ելլէն կ'անցնին կ'երևան :

Վ.ԵՐՁ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

---

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ

## ՏԵՍԻՒ Ա.

Պարտէզ մը • ձախ կողմը շարժական խրճիթ մը պիտի  
 ըլլայ սանդուխով՝ որուն մինակ դուռը կ'երեւայ: Տեսա-  
 րանին մէջ տեղը խոշոր ծառ մը: Ետեւի կողմը պատ՝  
 որուն վրայէն տուներու գագաթները կ'երեւան: Վա-  
 նանջեղէներ, ծաղիկներ, և այլն:

ՄԼՐԿՐԻՏ նստած կը գործէ:

## ԵՐԳ

Ժամանակաւ արքայ մը կար որ օրիորդ մը սիրէր  
 Էյիշատակ իւր սիրուհւոյն ոսկի բաժակ մ'էր շիներ:  
 Եւ ծանրագին թագ մը գլխուն հանդիսաւոր  
 օրերուն,

Սակայն թագէն հազար անգամ սրտին բաժակ էր  
 սիրուն:

Որով զինի խըմած ատեն սիրարորբոք իւր աչքեր  
 Սիրոյն նըւէր կաթիլ կաթիլ սրտասուքով լեցընէր:  
 Անցան օրեր, անցոյս արքայն սկսաւ սիրովն ծե-  
 րանալ,

Անմըխիթար՝ կեանքէն կարօտն չառած մահիճն  
 իւր մըտնալ,

Ծանրախօսիկ լեզու կցեալ մարած աչաց ճառա-  
 դայթ

Բերէ՛ք, կանչեց, սիրանըւէր բերէ՛ք ոսկին իմ  
 դաւաթ,

Լեցուցէ՛ք անապակաւ, մօտեցուցէ՛ք իմ շրթանց  
 Զովացնել սիրոյս իմ բոց, օրերուս ոյժ տալ մարած:

Ո՛վ սիրուհիդ իմ նազելի իմ վերջին շունչ քեզ  
 համար:

Ահա թռչիմ երկինքն ի վեր հրեշտակիս հետ միա-  
 նալ:

ՄԱՐԿ · ԱՆ, ( հաստազեւոյ ) ո՛րչափ կը փափաքիս գիտնալ, թէ ո՞վ էր ան երիտասարդ պատանին՝ որ ինծի հետ խօսեցաւ եկեղեցիէն ելած ատենս : Տարակոյս չ'կայ որ օտարական մըն էր . Մարթա կ'ըսէ թէ չճանչնար զինքը . Մարթա երեսուն տարեկան կը կարծէ զինքը, բայց ես չեմ կարծեր որ քսանեւհինգ տարեկանէն աւելի ըլլայ : Սակայն ես ի՞նչ բաներու վրայ կը խորհիմ, գործերու ժամանակ է, եւ ոչ թէ երգելու : ( Առաւելին յանկարծ ) Տարակոյս չունիմ որ այն երիտասարդը երեւելի գերդաստանէ մըն է, այո՛, երեւելի գերդաստանէ մը ըլլալը առաջին անգամ զինքը տեսնալու խակոյն գիտցայ : Ա՛հ, կարծես թէ ձեռքս բնաւ առաջ չերթար գործելու . ( կ'ելլէ ու գործը ձեռե կը րհէ . ) գուցէ Մարթա եկած է, Մարթա՛, ( կը հանչէ ) ո՛հ, չէ, պէտք չէ որ այդ երիտասարդին վրայ մտածեմ : ( Կը ձեռե, երճելէ կ'երթայ երգելու : Երաժշտութիւն : )

ՏԵՍԻԼ Բ .

ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ ու ՓՕՍԹ պատին մէջի դռնէն ներս կը մտնեն :

ՄԵՓԻ · Կամաց, բժիշկ, կամաց :

ՓՕՍԹ · Մարկըիտ հո՞ս կը բնակի :

ՄԵՓԻ · Այո, հոս կը բնակի :



ՓՕՍԹ . Վերջապէս :

ՄԵՓԻ . Ես կրնայի սա պատին մէջէն աւելի մօտ ճամբով մը դալ , բայց այդ դուռը տեսայ՝ որուն բանալին ալ պարտիզպանին քովն էր . ուստի ես իբրեւ գործունեայ եւ այս տեսակ գործերու տեղեակ անձ մը , պարտ համարեցայ պարտիզպանին մօտենալ ու բանալին . . . բայց իմ միտքս ոչ թէ բանալին ուղել էր , հապա զինքը վասակիլ ու ինծի ծառայեցնել . ամեն մարդ պէտք է ինծի պէս իրեն գործին վրայօք լաւ հմտութիւն ունենայ :

ՓՕՍԹ . Ուրեմն , Մարկրիտ այդ խրճիթին մէջ կը բնակի :

ՄԵՓԻ . Այո , այդ խրճիթին մէջ , եւ նոյն տեղն է որ վաղը իւր անուշիկ կեռասի նման շրթունքներուն առաջին անգամ սիրոյ խօսքեր արտասանելը պիտի լսէ :

ՓՕՍԹ . Եւ ի՞նչպէս իր բոլորտիքը գրտնուող ամենայն ինչ՝ մաքրութիւն՝ խաղաղութիւն ու հանդարտութիւն կը բուրեն :

ՄԵՓԻ . Այո , գետինները մաքուր աւլուած ըլլալուն է այդ . ( Դէ՛հ գուտի ճը կը հանէ զգետինի ասէն ) Հիմա գանք ադամանդներուն :

ՓՕՍԹ . Ո՛հ , ի՞նչպէս երջանիկ ու անմեղ հանդարտութեամբ կ'անցնին իր օրերը եւ գիշերները , եւ ի՞նչպիսի խաղաղ ու սուրբ է առաքինութեան ու գեղեցկութեան քունը :

ՄԵՓԻ • Անտարակոյս շատ խաղաղ ու սուրբ ուրեմն խօսքերնիս սա աղամանդներուն վրայ դարձնելու ըլլանք՝ կարծեմ դէշ չըլլար •  
(Տո՛ւր Դէ՛ Յե՛ռէն Բա՛սը կ'առնէ :)

ՓՕՍԹ • Սիրեցեալ ու պաշտելի ամուսինով մը ընկերանալ, թշուառութեանց ու տխրութեանց վերջ տալ, միանդամայն միատեղ վայելել ուրախութիւնք • — զաւակներ՝ որոնց դողտրիկ երեսները ամուսնոց մէջ եղած երջանկութեան հայելին է :

ՄԵՓԻ • Երջանկութի՛ւն, այս՛ • դժբաղդութիւն, հիւանդութիւն, սիրտ հատցնել, հալիլ, մաշիլ • սա է ամուսնացելոց կեանքը, այնպէս չէ՛. ո՛հ, ես բաւական ամուսնացեալ կենաց հմուտ եմ, հիմա սա աղամանդները հոս դնենք :

ՓՕՍԹ • Չէ՛, կ'արգիլեմ ես այդ առաջարկութիւնդ :

ՄԵՓԻ • Բայց, ներեցէ՛ք ազնիւ . . .

ՓՕՍԹ • Սատանայ, երկրիս վրայ քու ամենէն զօրաւոր թշնամիդ երիտասարդ աղջիկն է, որ անբժութեամբ, անմեղութեամբ եւ առաքինութեամբ դիներալ է • աղամանդներդ ալ գետինն անցնին, դուն ալ, կորի՛ :

ՄԵՓԻ • (Երբաւով) շատ լաւ, շատ լաւ, (դառնաւով) կեցի՛ր, ես միտքս փոխեցի • ու, բեմն ես ալ տանիմ Սիպելին ընծայ ընեմ :

ՓՕՍԹ . Սիպելի՞ն :

ՄԵՓԻ . Քու աշակերտդ — Մարկրիտի սիրահարին . գուցէ ան ձեզի պէս երկչոտ ու անտանելի չէ :

ՓՕՍԹ . Ի՞նչ ըսել կ'ուզես :

ՄԵՓԻ . Ի՞նչ պիտի ըսեմ , ան ատեն Սիպել ալ ասոնք Մարկրիտին ընծայ կ'ընէ . եւ գուցէ այսօր . . .

ՓՕՍԹ . Սակայն Մարկրիտ զինքը չ'սիրեր , եւ Սիպել ինքնին ինծի ըսած է :

ՄԵՓԻ . Բայց կարծեմ գոհարեղէն ընծայ մը այդ տեսակ խորութիւնները մէկդի թողուլ կուտայ . — ահաւասիկ , Սիպել հոս կուգայ :

ՓՕՍԹ . Եւ ի՞նչ բանի համար հոս կուգայ :

ՄԵՓԻ . Մի եւ նոյն բանին՝ որուն համար դուք հոս եկած էք . եկո՛ւր , սիրելիդ իմ եկո՛ւր : ( Ծառերուն էտէ — կը ծածկուին : )

## ՏԵՍԻԼ Գ .

Նոյնք եւ ՍԻՊԵԼ , ներս կը մտնայ թառամեալ ծաղիկները ձեռքը :

ՍԻՊԵԼ . Այդ դժոխային վհուկին խօսքն ելաւ . Մարկրիտի համար գոյնզգոյն դալար ծաղիկներ կը ժողվեմ , գեղեցիկ փունջեր կը շինեմ , մէյմ' ալ յանկարծ ձեռքիս մէջ կը

Թառամին : Բոլոր ընկերներուս պատմեցի աս  
բանը , անոնք ալ զիս կը ծաղրեն եւ կ'ըսեն  
թէ քիչ օրէն վարպետ տնկարուժ մը պիտի  
ըլլամ , վասն զի ծաղկանց դալար կամ Թա-  
ռամեալ ըլլալն աղէկ կը ճանչնամ : Տես մէկ  
մը փունջը , միթէ մէկը կրնա՞յ այսպէս դե-  
ղեցիկ ու շքեղ փունջ մը կապել իւր սիրուհ-  
ւոյն ընծայ ընելու համար :

ՄԵՓԻ . Հա' , հա' , հա' , հա' :

ՍԻՊԵԼ . Կորի'ր , ( կը նեւէ ծաղիկները ) ան  
սատանայական վհուկը հոս գալէն 'ի վեր ա-  
մեն բան փոխուած կ'երեւայ , գինին բոց կը  
դառնայ , ծաղիկները կը դոսանան , եւ իմ  
դասատուս Ծօսթ աներեւոյթ եղեր է . եւ ոչ  
մէկը գիտէ թէ ո՞ւր է . ոմանք կ'ըսեն թէ  
Ծօսթ երեւելի վհուկ մըն է . ոմանք ալ կ'ըսեն  
թէ երեւելի ուսումնական մըն է . բայց ես ալ  
կ'ըսեմ թէ Ծօսթ ամենախենդ մըն է :

ՄԵՓԻ . Հա' , հա' , հա' , հա' :

ՍԻՊԵԼ . Սակայն Մարկրիտիս պարաէզին  
մէջի ծաղիկներն ալ թարամած չեն հարկաւ ,  
անհնարին է որ . . .

ՄԵՓԻ . Իրա՞ւ կ'ըսես , փորձէ կ'ուզես նէ :

ՍԻՊԵԼ . Ես հիմա մէկ հատ մը կը բրցնեմ .  
( Ռժ դգո-շո-նէաճ Ժարհերուն ծայրին հոնելով  
Վարդի ճը ծառ-ին կը Տօսէնայ . ) ահաւասիկ մէկ  
կարմիր ու դալար վարդ մը . ( կը բռնէ , իսկոյն

հը Ռառ-աճի . ) ո՛հ , սատանան , վհուկը աս ծա-  
ղիկներուն մէջ կը բնակի :

ՄԵՓԻ . Հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ :

ՍԻՊԵԼ . ( նեփել-Վ ծաղիկ ) գնա՛ , սատանայի  
ծաղիկ , դարձեալ պիտի փորձեմ , գուցէ շատ  
բացուածը փորձեցի . ահաւասիկ արեգակ-  
նաձեւ ծաղիկ մը . հը Բրոյնէ , Իսկոյն հը Գոյո-տ . )  
ա՛հ , ուրեմն պիտի շկարենամ՝ Մարկրիտիս  
փունջ մը ընծայել այս առաւօտ . ( սանդո-խէն  
Վեր հ'ելէ : )

ՓՕՍԹ . Բայց տե՛ս , դէպ 'ի խրճիթը կ'եր-  
թայ :

ՄԵՓԻ . Իրաւունք ունի երթալու . — սրով-  
հետեւ Մարկրիտին նշանածն է :

ՓՕՍԹ . Նշանածը :

ՍԻՊԵԼ . ( դո-ուր հը դարնէ . ) Արնա՛մ ներս  
դալ . ( դո-ուր հը Բանայ . ) Մարկրիտ հոս չէ ,  
բայց քիչ մը առաջ հոս եղած ըլլալու է , ու  
րովհետեւ ձեռագործն հոս է : ( ՍՌափէլ-Վ )  
Հերսան ինձի զուրցեց որ եթէ մատս օրհնեալ  
ջուրը թաթխեմ , մոգութեան կապերը կը  
քակուին . փորձեմ : ( Մաքը Խրճիթին ՌՂէ օրհ-  
նեալ Ղ-ուր հը Ռաթիէ . — ՄեՔիսթօՔէլէս աճա-  
պարանիօք եր հը Խաշո-տ : )

ՓՕՍԹ . Ի՞նչ կ'ըլլաս :

ՄԵՓԻ . Ոչինչ . դող մը եկաւ վրաս :

ՍԻՊԵԼ . Աեցիր նայիմ . ( Վարդեր հը Բրոյնէ . )

հիմա պիտի թառամի՞ն դարձեալ, ո՛չ . ( առ-  
 րախոսութեամբ ) Հերմանին զուրցածը ճշմարիտ  
 է եղեր . ( ծաղեհներ հը ծողվէ փոռնը հը շեհե . )  
 ա՛հ , հիմա ուրախ եմ . ( փոռնը երճիւիս դրանը  
 վրայ հը հախե . ) ո՞րչափ պիտի զարմանայ Մար-  
 կրիտ արդեօք . երթամ ու շուտով ետ դառ-  
 նամ դամ , այնպէս ձեւացնելով՝ թէ ես չեմ  
 կախողը , եւ ուրիշ բանի տեղեկութիւն չու-  
 նիմ . « Ո՛վ » « Ա . ն » « Ա . յո՛ » « Փուռն յ մը » : ( Աե-  
 պել պատիճն դռնէն հ'երկայ : )

ՓՕՍԹ . ( առաջ Գաւրճ ) Աղամանդներն  
 ո՛ւր են :

ՄԵՓԻ . Հոս է . ( երէն հոսայ ) հանդաց եւ  
 բանջարեղինաց մէջ կռիւ մը պիտի ծաղի —  
 տեսնանք աղամանդները զօրաւոր են՝ թէ  
 ծաղիկները :

ՓՕՍԹ . Գուցէ Մարկրիտ ծաղիկները գե-  
 լազանցէ :

ՄԵՓԻ . Կարծեմ չկրնար այդպէս բան մը  
 ընել՝ քանի որ աղջիկ է :

ՓՕՍԹ . ( աղամանդապատէր « անդոսիս վարե-  
 ոսիս վրայ հը դեհե . ) Ծաղիկներուն մօտ չդնե՛մ :

ՄԵՓԻ . Թո՛ղ որ այդ ծաղկանց վրայ փչեմ  
 ու թարամեցնեմ :

ՓՕՍԹ . Չէ , ձգէ . թող Մարկրիտ իր որո-  
 շումն ընէ :

ՄԵՓԻ . Տարակոյս չկայ որ աղամանդները

պիտի որոշէ , այնպէս չէ՞ , դուն ալ գիտես ,  
հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ . բայց ահաւասիկ Մարկը  
րիա կուգայ . ապա ին եկուր , ապա ին սա կող  
մը : ( Օտարին ետեւ — ին ծածկոտին : )

ՏԵՍԻԼ Դ .

Նոյնք եւ ՄԱՐԿՐԻՏ խրճիթին գուռը կ'ելէ :

ՄԱՐԿ . Մարթա ալ կ'ուշանայ . այդ կինը  
խօսքը շատ կը սիրէ : Թշուառ Սիպեւէն ու  
րիչ փուռը մ'ալ — եւ ի՞նչ է այս , տուի մը :

ՄԵՓԻ . Հասաւ ժամանակը , մեր ծածկեալ  
մարտկոցն իր ռումբերն արձրկելու վրայ է :

ՄԱՐԿ . Ո՛հ , եւ ինչպիսի՞ զարդարուն տուի  
մը . բայց ի՞նչպէս եւ ուստի՞ եկած է . արդ  
եօք ո՞վ է բերած :

ՄԵՓԻ . Ո՞վ է բերած , հա՛ , հա՛ , անխա  
նայի հրաշք , եւ վերջապէս . . .

ՄԱՐԿ . Եւ ահա բանալին ալ վրան — բա  
նամ — բայց չէ , գուցէ բանալս անիրաւու  
թիւն սեպուի :

ՓՕՍԹ . Կը լսե՞ս :

ՄԵՓԻ . Ո՛հ , դուք հոգ մի՛ ընէք , ան անանկ  
կ'ըսէ , բայց քանի որ այն դեռահաս աղջիկ  
մըն է , տարակոյս մի՛ ունենաք , հարկաւ պիտի  
բանայ :

ՄԱՐԿ . Արդեօք ի՞նչ կրնայ ըլլալ մէջը .

ո՞վ է արդեօք զայն բերողն ու պատուհանիս  
վրայ դնողը . թերեւս խեղճ արարած մը սը-  
խալմամբ հոս բերած ըլլայ . այո՛, անշուշտ  
այսպէս եղած է . — խեղճը՝ ի՞նչպիսի տառա-  
պանաց եւ ցաւոց մէջ կը տանջուի արդեօք .  
ի՞նչ ընեմ, կարելի է տիրոջն անունը դրուած  
ըլլայ մէջը . այո՛, պէտք է որ բանամ եւ տես-  
նեմ թէ որո՞ւ ուղղուած է : (Յատա՛ջ Գալ՛Վ)

ՄԵՓԻ . Հա՛, հա՛, հա՛, հա՛ :

ՄԸՐԿ . ( Կը Բանայ ) Ա՛յ, առ ի՞նչ գեղեցիկ  
բան : ( Փո՛նջը Յե՛տէն կը ՅԳԷ . )

ՄԵՓԻ . Թշնամւոյն բանակը ցրուեցաւ ,  
հանգայինը , բանչարեղէնի բանակը ցիրուցան  
փախուց :

ՄԸՐԿ . Ա՛հ, ի՞նչ գեղեցիկ աղամանդ-  
ներ , ճիշդ թագուհւոյ մը վայելուչ . որո՞ւ ըս-  
տացուածն է արդեօք : Բայց շունչս ալ կը նը-  
ւաղի , չըլլայ թէ մէկը տեսնայ զիս . — բայց  
նայելը ի՞նչ վնաս կրնայ ունենալ . ( Կո՛ւր  
Բո՛ւրն Վրայ կը Դնէ . ) եւ սակայն չեմ կրնար  
առանց զմայլման թողուլ եւ հեռանալ ասկից .  
մինակ սա օղերն իմս ըլլային . անգամ մը փոր-  
ձեմ , տեսնեմ թէ կը վայլէ՞ ինձի . ( օղերը կը  
հախէ ) ա՛հ, տես թէ աղամանդք ի՞նչ գե-  
ղեցկութիւն ունին , եւ իրենց գեղեցկու-  
թեամբը մարդուս ալ դէմքը՝ նայուածքը՝ բո-  
լորովին կը փոխեն , կ' զգամ , ո՞վ որ այս վայր-



կեանիս ինձի հետ խօսելու ըլլայ՝ առանց երկիրդի կրնամ պատասխանել իրեն :

ՄԵՓԻ . Աեցցե՛ն , կեցցե՛ն հանգայինք :

ՄԱՏԿ . Սա ապարանջանները , կարծես թէ մասնաւոր ինձի համար շինուած են . ( Եւ-ը կ'անցընէ ) ա՛հ , երիտասարդ մը ձեռքս բռնելու չափ ազդեցութիւն տուին ինձի ասոնք . ո՛հ , Մարկրիտ , ասոնք քեզի պէս աղքատիկ աղջկան մը գործածելիք բաները չեն . ո՛հ , ( հառ-աչէլով ) ի՞նչպէս երջանիկ են արդեօք հարուստները :

ՄԵՓԻ . Աեցցե՛ն , կեցցե՛ն հանգայինք :

ՄԱՏԿ . Սա զարդը կուրծս կախեմ , տեսնեմ ան ի՞նչպէս կը վայլէ . ա՛յ , ի՞նչպէս ալ պաղ է , բայց հիմա կոկորդս այրիլ սկսաւ . ո՛հ , ո՛հ , ( Ինչպէս կ'անցընէ ) ի՞նչ սիրուն օրիորդ մի ես , հիմա մէկ սիրահար մը կը պակասի քեզի :

ՄԵՓԻ . Աս գործը լմնցաւ , պարոն բժիշկ , եկո՛ւր երթանք :

ՓՕՍԹ . Ես չեմ կրնար հեռանալ իրմէն :

ՄԵՓԻ . Սակայն ես ալ պատճառ ունիմ , եկո՛ւր : ( Անէրէ-ոյլ կ'ըլլան : )

ՏԵՍԻԼ Ե .

ՄԱՏԹԱ խրճիթին ձեջ կ'երեւնայ :

ՄԱՏԿ . Ա՛հ , ո՛ւր էր թէ այն երիտասարդ

օտարականն հիմա տեսներ զիս :

ՄԱՐ . ( ասնորո-խէն Վար Եջնաւ-Վ ) Ա՛հ , զաւակս , աս ի՞նչ կը տեսնեմ , ( Մարէրեոս արաս-Տանդնէրը էր ծածկէ , — Յեռ-էրը Էո-րծ-ին Վրայ ) աստղափայլ գիշերուան նման գեղեցիկ կ'երեւաս աչքիս . օ՛ օ՛ ի՞նչ գեղեցիկ աղամանդնէր , ո՞վ խրկեր է ասոնք :

ՄԱՐԿ . Չեմ գիտեր ո՞վ է խրկեր , սակայն այս տուփը սանդուխին ոտքին վրայ դրած գտայ , եւ անշուշտ սխալմամբ հոս բերուած :

ՄԱՐ . Սխալմամբ , ոչ , սիրելիդ իմ , քեզի պէս սիրուն աղջկան մը աղամանդնէր խրկելու մարդ չ'սխալիր :

ՄԱՐԿ . Չեմ հասկնար միտքդ :

ՄԱՐ . Ապահով եղիք , որ աս աղամանդնէրը սիրահարէ մը ընծայ խրկուած են քեզի գուցէ հարուստ իշխանէ մը՝ որ դ.քեզ կը սիրէ :

ՄԱՐԿ . Սիրահարէ՛ մը , ո՞վ երկինք . ( օղէրն հանէլով : )

ՄԱՐ . Ի՞նչ կ'ըլլաս :

ՄԱՐԿ . Ալ չեմ ուզեր որ ասոնք մէկ վայրկեան մը վրաս գտնուի . ո՛հ , Մարթա , օղնէ ինծի , հանեմ սա զարդերը :

ՄԱՐ . Աճապարել պէտք չէ , սիրելիդ իմ , ես այնպէս կարծեմ որ աս աղամանդնէրն ան երիտասարդ օտարականը խրկած է որ , այս տուտուտ . . .

ՄԱՐԿ Շնորհակալ եմ, Մարթա, ես ինքնիրենս կրնամ հանել, բայց թէ որ կ'ուզես զիս այս աղամանդներով զարդարեալ տեսնել...

ՄԱՐ . Ապահով եմ որ այն օտարականը քեզի զարնուեցաւ . եւ այս առաւօտ քաղաքը դացած ատենս հետաքրքրութեամբ լսեցի որ՝ Թրապիզոնի հարուստ իշխանն է եղեր, որ գաղտնի կերպով ճանապարհորդութիւն կ'ընէ :

ՄԱՐԿ . Իշխան'ն մը, այո՛, — իր աչքերուն մէջ կը փայլի ազնուականութիւնը : ( Աճապարանօք զարդերը էլ հանէ : )

ՄԱՐ . Ի՞նչ կ'ընես :

ՄԱՐԿ . Մարթա, ես շատ սխալեցայ . անխրաւութիւն էր ասոնցմով զարդարուիլը . — մէկդի առ' , նետէ' :

ՏԵՍԻԼ Զ .

Նոյնք եւ ՍԻՊԵԼ, պատին վրայ կ'ելլէ :

ՍԻՊԵԼ . Օգնութի՛ւն, օգնութի՛ւն :

ՄԱՐ . Է՛հ, ո՞վ է այդ մարդը, Սիպելն է :

ՄԱՐԿ . Ո՞վ երկինք :

ՍԻՊԵԼ . Ազատեցայ . ( Հար է՛ էջնայ . ) ազատեցայ, չմեռայ :

ՄԱՐ . }  
ՄԱՐԿ . } Ի՞նչ եղար :

ՍԻՊԵԼ, • Այն դժոխային վհուկը . . .

ՄԵՐԿ • Ի՞նչպէս վհուկ :

ՄԵՐ • Շո՛ւտ պատմէ :

ՍԻՊԵԼ • Ա՛հ, ի՞նչ բռեմ՝ շատ տեսակ բաներ  
բերաւ դժտուս աս վհուկը . հիմա ալ  
ճամբան պզտիկ սեւ շուն մը ետեւէս ինկեր էր  
պուշտալով . է՛հ, առաջին անգամ բանի  
տեղ չդրի հաջելը, բայց նա բոլորտիքս պտը-  
տեցաւ եւ վերջապէս վրաս վազեց ու որ-  
բունքս խածաւ, դոնէ աղւոր սրունքս ալ  
չըլլայ . հոգիս բերանս դալով վազեցի վազեցի  
մինչեւ մեղուներու բոյնին մէջ ինկայ . — աս  
թշուառական կենդանիներն ալ ինծի մէկ սի-  
րալիր ընդունելութիւն մը ցուցնելու համար,  
իսկոյն դուրս վազեցին, ու մազերուս մէջ,  
լաթերուս մէջ, ձեռքերուս վրայ, քթիս վրայ,  
աչքերուս մէջ, եւ շանը խածած սրունքիս  
վրայ, դոնէ աղւոր սրունքս ալ չըլլայ, պըղ-  
պըջալով, չորս դիս խայթոցներնին մխեցին,  
անկից ալ հազիւ կրցայ փախչիլ, երբ եկե-  
ղեցւոյն մօտեցայ, յանկարծ երեք հատ բու,  
թեւերնին մէկմէկու զարնելով վրաս նետովե-  
ցան, օդն ալ սատանայից հահ, հահ ներու  
ձայներովը կը դուար . եւ թէ որ պատին վը-  
րայ ելլաք՝ դեռ ձայներնին կը լսէք :

ՄԵՐ • Մտտի խօսքեր կ'ընես Սիպել, ես  
ձայն չիմ' լսեր :

ՄԱՐԿ . Իմ ականջիս ձայն չդար :

ՍԻՊԵԼ . Ձայն չէ՞ք լսեր , ո՛հ , այդ դժոխա-  
յին վհուկն որ ետեւէս ինկեր է , ո՛չ ըսածս  
դիտեմ եւ ոչ ըսածս . հէ՛ , ( աղամանդները արեւ  
նէլով ) աղամանդատուի չէ՞ մի այդ , եւ ա-  
սանք աղամանդներ չե՞ն մի :

ՄԱՐ . ( Մարկիտիոն լուսնեան նշան ասելով )  
Աղամանդ , հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ :

ՍԻՊԵԼ . Կարծեմ աղամանդ ըլլանին շատ  
կապէս կը տեսնեմ , այնչափ յայտնի ինչպէս  
որ զձեզ կը տեսնեմ , եւ կրնամ ըսել թէ վը-  
րայի քարերն անդամ կրնամ մէկիկ մէկիկ  
համրել :

ՄԱՐ . Հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ :

ՍԻՊԵԼ . Գուն խնդա՛ կ'ուզեսնէ , բայց տես  
Մարկիտիոս բնաւ չխնդար :

ՄԱՐԿ . Սիպել , իրաւունք ունիս , տեսածդ  
տուփ ու աղամանդներ են :

ՄԱՐ . ( Մարկիտիոսը զգուշացնելով ) Որոնք եւ  
բերի , Մարկիտիոն ցուցնելու համար :

ՄԱՐԿ . Այո՛ , Սիպել — ինձի համար բե-  
րեր է որ նայիմ . ( Տէր-սէ ) ո՛հ , ի՞նչպիսի ա-  
մօթ ապարտութիւն մը կ'զգամ զինքը այսպէս  
խարելուս համար : Մարթա՛ , ա՛ռ տա՛ր ասանք  
տիրոջը յանձնէ :

ՄԱՐ . ( Տէր-սէ ) Մի՛ այդչափ աճապարեր  
սիրելիդ իմ . ( Բարձրագոյն ) անսխալապէս , սիրե-

լից խմ. — Սիպել, մնաս բարավ. (Խնդաւով  
ճը) պղտիկ սեւ շունը, մեղուներուն բոյնը,  
ու, ու, երեք բու, հա', հա', հա', հա': (Խըր-  
ճիւղէ կ'երբայ:)

ՍԻՊԵԼ. Սիրտս բնաւ չսիրեց այդ կիներ, եւ  
կարծեմ որ Մարթա քեզի այնչափ յարմար  
ընկեր մը չէ, Մարկըիտ: Ուր էր թէ Վալէն-  
թայն հոս ըլլար քեզ պաշտպանելու համար:

ՄԱՐԿ. Պաշտպանե՛լ, եւ ի՞նչ բանէ:

ՍԻՊԵԼ. Այն երկու անձերէն՝ որոնք տանը  
բողոքախօսը կը պտըտէին:

ՄԱՐԿ. Երկու անձերէ՛ն . . .

ՍԻՊԵԼ. Այո, մէկը այն անիծից ծնունդ  
դժոխային վհուկը, (Երէն-դաճ-ու-Ե-աճ-ը չորս դէն  
կը հասցի, ու խօսար ընդ-ձե-լով՝ հաճաց ճը) միւսն  
ալ դքեզ կը սիրէ:

ՄԱՐԿ. Ձիտ կը սիրէ:

ՍԻՊԵԼ. Այո, եւ դուն հոս մինակ ես:

ՄԱՐԿ. Բայց Մարթա միշտ քովս կը կենայ:

ՍԻՊԵԼ. Մարթա, ես այդ կիներ սրտանց  
կ'ատեմ. քեզի զուրցելս հոգ չեմ ընել, բայց  
դխայիր որ, Մարթա այրի կիներն է, եւ կը  
լսեմ որ ամուսինն ալ դեռ ողջ է:

ՄԱՐԿ. Ո՞ղջ է, ո՞հ, ի՞նչպէս պիտի ուրա-  
խանայ այդ լուրը լսելով:

ՍԻՊԵԼ. Բողոքովին ընդհակառակը. ես այն-  
պէս կը լսեմ որ, ասոնք մէկտեղ եղած ա-

տեննին, շատ թշուառ եւ ասերջանիկ կեանք  
մը անցուցեր են. մարդը օժգոհ իւր կեան-  
քէն՝ առտու մը առեր գալեր է, եւ անկից 'ի  
վեր Մարթա քարոզ կը կարդայ՝ թէ ինքը  
այրի է. եւ կարծեմ, շատ հաւանական է, որ  
Մարթա եւ այդ երիտասարդ իշխանը մէկը-  
մէկու գիտաւորութիւննին հասկցուցած են :  
Ես ամենեւին հաւատարմութիւն չեմ ըներ  
Մարթային՝ ադամանդներուն վրայօք ըրած  
չինծու պատմութեանը :

ՄԱՐԿ . Սակայն, ի՞նչ պէտք է ընեմ, Աի-  
պել :

ՍԻՊԵԼ . Եկուր մօրս քով կեցիր, մինչեւ  
որ Վալէնթայն ետ դառնայ : Ապահով եմ  
որ, մայրս զքեզ իւր զաւկին պէս պիտի սիրէ  
ու խնամէ :

ՄԱՐԿ . Քուցէ ձեր ըսածը ուղիղ է, Սիպել :

ՍԻՊԵԼ . Անտարակոյս, ճշմարիտ է ըսածս :  
Ես՝ մութը կոխելու ըլլայ նէ՛ կուգամ քեզ  
կ'առնեմ մօրս կը տանիմ :

ՄԱՐԿ . Շատ աղէկ, Սիպել. արեւը մարը  
մտնելուն պէս՝ ես կը պատրաստուիմ :

( Երած շտուկիւն : )

ՏԵՍԻԼ Է

ՄԱՐԹԱ խորթիթին մեջէն Մեֆիաթօֆեւեաի հետ տե-  
տութիւն կընէ . ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ կը խոնարհի .  
ՓՕՍԹ կը հետեւի իրեն . ՍԻՊԵԼ քիչ մը կը հետանայ :

ՄԱՐ . Տեա՛րք իմ :

ՄԵՓԻ . Տիկին Մարթա Սիւրհէյն :

ՄԱՐ . Տեա՛րք իմ :

ՄԵՓԻ . Ներեցէ՛ք մեր համարձակութեա-  
նը : ( խոնարհելով )

ՄԱՐ . ( Տեղուսի առ Մարկոս ) Երեւելի դեր  
դաստանէ օրիորդ մը կը կարծեն դքեղ :

ՍԻՊԵԼ . ( ցած ) Այն դժոխային վհուկը :

ՄԱՐԿ . Տեա՛րք իմ, կը սխալիք, ես մէկ  
թշուառ ու խոնարհ աղջիկ մըն եմ : ( Երբ-աւ  
ձեռացնելով : )

ՓՕՍԹ . Ա՛յաղաչեմ, կեցի՛ք :

ՄԱՐԿ . ( Հեղոթեամբ ) Տէ՛ր իմ :

ՍԻՊԵԼ . Ո՛հ, տե՛ս Մարկրիտ այդ օտարա-  
կանին հետ կը խօսի :

ՄԵՓԻ . ( Մարկոսին հայեւով ) Մենք ալ ճիշդ  
աս միջոցիս հասանք « Ֆէրրարայէն » :

ՄԱՐ . Ֆէրրարայէ՛ն :

ՄԵՓԻ . Եւ հոնկից ձեզի լուրեր բերեր եմ :

ՄԱՐ . ( Տեղուսի աճադարանօք ) Լաւ, եւ . . .  
երկնից սիրոյն համար . ( Բարձր ) Ֆէրրարա՞ .  
եւ Ֆէրրարայի մէջ ծանօթ մարդ մը չու-  
նիմ :



ՓՕՍԹ . ( առ Մարկէրէս ) Մեր բարեկամ պարոն Մեֆիսթօֆելերը տիկին Մարթային համար յանձնարարութիւն մը ունի . թէ որ կը հաճիր թեւս մտնել — ( Վեր վար պարտելով է՛լէլէն : )

ՍԻՊԵԼ . Ո՛վ նախատանայս . աւելի գէշ :

ՄԱՐ . Կարծեմ ամուսնոյս վրայ կը խօսէիր . աշխարհք կը հաւատայ թէ իմ թշուառ ամուսինս մեռած է :

ՄԵՓԻ . Աւա՛ղ , տիկին , շատ ճշմարիտ է . ես անձամբ տեսայ զինքը՝ իւր մեռնելէն անմիջապէս կէս վայրկեան ետքը . — ալ չկայ ձեզի ամուսին . ( Մարկէս ճիշտը կը հանէ , առ Մեֆիսթէրէս բազում-հնէրուն Ռջ ճարած է՛րջնայ : )

ՄԵՓԻ . Ամուսինէդ բան մը բերի քեզի :

ՄԱՐ . ( յանկարծ տրտնուելով ) Ի՞նչ :

ՄԵՓԻ . Իր օրհնութիւնը :

ՄԱՐ . Ա՛յդչափ :

ՄԵՓԻ . Եւ ոչ աւելի :

ՄԱՐ . Յնորեալ թշուառն . . .

ՄԵՓԻ . Աւա՛ղ , տիկին , եւ այլ ի՞նչ լուր կրնայիր յուսալ այնպիսի անձէ մը՝ որ բազմաթիւ տարիներ ձեր յամիշտակիչ այտերէն զուրկ մնացեր էր :

ՄԱՐ . Շատ ստոյգ , եւ շատ ճշմարիտ է ըսածնիդ . ս՛հ , դուք մէկ ճշմարտախօս աղնուական մը կ'երեւաք . բայց երբ մէկը այլի

է, անտարակոյս կ'ուզէ դիտնալ թէ — քա-  
լենք թէ որ կը հաճիք : ( ՄեՔիտի Բե-ը էը  
Տրնայ . — Իրարո- երես նայելով — Խնդարով —  
հարարուելով հ'ելլեն : )

ՍԻՊԵԼ . ( Բու-ի-երո-ն էրե-էն ) Ի՛նչ բանի  
վրայ կը խօսէին ասոնք . ա՛հ . ( Տեանելով ՂԱՅԵ-  
հրեա և Ծօսը , որո շատ հողէն ներս էը Տրնէն : Տե-  
աարանը \*էչ Տը էը Տըբննայ :

ՏԵՍԻԼ Ը .

ՄԱՐԿ . Ըսել է որ դուք իշխան չէք :

ՓՕՍԹ . Ո՛չ , ես մէկ թշուառ անձ մի եմ ,  
որ ձեզմէ հեռու ապրելը ինձի համար ան-  
հնարին է :

ՄԱՐԿ . Անհնարի՛ն —

ՓՕՍԹ . Այն առաջին վայրկեանէն որ ձեզ  
տեսայ , սիրեցի զձեզ :

ՄԱՐԿ . Սիրեցի՛ք :

ՍԻՊԵԼ . ( Ժառ-ին էրե-էն ) Ո՛վ կատաղու-  
թեանս , խօսակցութիւններուն մէկ բառն  
անգամ չեմ կրնար լսել :

ՓՕՍԹ . Այո , Մարկրիտ , զձեզ սիրեցի ,  
եւ այնպիսի սիրով մը՝ որ կենացս հետ կրնայ  
վերջանալ :

ՄԱՐԿ . Խօսքերնիդ կը յայտնեն թէ ինձի  
պէս խեղճ աղջիկ մը կը ծաղրէք :

ՓՕՍԹ . Յանուան երկնից , Մարկրիա , կը սի-  
րեմ — կը մեռնիմ քեզի համար :

ՄԱՐԿ . Ամօ՛թ , պարոն . — ես չեմ հաւա-  
տար ձեր խօսքին : ( Կ'երբան : )

ՄԻՊԵԼ . Օ՛հ , Մարկրիա :

ՏԵՍԻԼ Թ .

ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ ու ՄԱՐԹԱ Թե Թեի ներս կը մանեն :

ՄԱՐ . Երկրորդ անգամ ամուսնանա՛լ ,  
ա՛հ , պարոն , կը տեսնեմ որ կը ծաղրէք զիս .  
եւ դարձեալ ամուսնանա՛մ : Գուք միշտ ճամ-  
բորդութիւն կ'ընէք , այնպէս չէ՞ :

ՄԵՓԻ . Այո — դործս կը պահանջէ որ աշ-  
խարհիս չորս դին պալտիմ . . .

ՄԱՐ . Ա՛հ , այդ աւելի երիտասարդաց  
համար շատ գեղեցիկ դործ մըն է , սակայն  
յառաջացեալ հասակէ մը ետքը մարդ սիրուն  
եւ հասուն ընկերոջ մը կը կարօտի :

ՄԵՓԻ . Ընկերոջ մը՛ :

ՄԱՐ . Որ կարող ըլլայ զձեզ խնամելու :  
Գուցէ պատահած չէք այդպիսի կնոջ մը՝ որ  
ձեր միտքը հասկցած ըլլայ :

ՄԵՓԻ . Օ՛ , պատահած եմ խիստ շատերու :

ՄԱՐ . Սմուսնութեան համար ստեղծուած  
կ'երեւաք :

ՄԵՓԻ . ( Ճակատը շփելով ճշ ) Յիրաւի , երբեմն  
այդ կերպարանքն ալ կ'առնում վրաս :

ՄԱՐ . Կրնա՞ք սիրել — այլի կին մը : (Տե-  
սարանն աւելի ճոշն )

ՍԻՊԵԼ . Ի՞նչ բանի վրայ կը խօսին արդեօք .  
( պարտիզի առտաներուն վրայ ինչ գլխորի : )

ՄԱՐ . Ի՞նչ է այդ , Սիպել մեզ մտիկ կ'ընէ :

ՄԵՓԻ . Թող որ երթամ երկու խօսք ընեմ  
իրեն , խկոյն մեկնի ասկից :

ՄԱՐ . ( Ռհոստ ) Կարծեմ աս անձը զիս  
կը սիրէ :

ՍԻՊԵԼ . ( որ Մեֆես էրեն Տօբեցած ասեղը դող-  
դոջունն ասլերով ետ ետ ինչ ասշուտ . ) Կ'երթամ —  
կ'երթամ :

ՄԵՓԻ . Կորի՛ր . ( Երաժշտութիւն . — Մեֆես  
չեռնի էրէնցնէ , ծառը ինչ Բացուտ . Սեպել ծա-  
ռին Ռջ ինչ քնայ : )

ՄԱՐ . Պնա՛ց :

ՄԵՓԻ . Անմիջապէս :

ՄԱՐ . Խիստ շուտ դնայ . ( Մեֆեսին Ռե-  
Տօնալով ) Եթէ կը հաճիք՝ դարձեալ երթանք  
պարտինք սա ծառերուն տակը : Ի՞նչպէս ալ  
մութցաւ : ( Կը Ռհոստ : )

ՏԵՍԻԼ Ժ .

ՄԱՐԿՐԻՏ ու ՓՕՍԹ Կուգան :

ՓՕՍԹ . Ուրեմն կը ներէ՞ք այն համարձա-  
կութեանս՝ որ եկեղեցիէն ելած ատեննիդ  
ձեզի հետ խօսեցայ :

ՄԱՐԿ . Ո՛Տ, ամօթէս ինչ ըլլալս չդիտցայ .  
կարծէի թէ ամօթէս պիտի մեռնէի այն վայր-  
կեանիս — եւ . . .

ՓՕՍԹ . Ո՛Տ, պաշտելիդ իմ Մարկրիտ ( ծա-  
ռին տակ էր նստիս . ) կեանքս հոս քու քովիկդ  
կրնամ անցընել . ո՛Տ, բնաւ կենացս մէջ այս-  
չափ երջանկութիւն զգացած չեմ՝ որչափ որ  
հիմա կ'զգամ . առանց ծնողաց , առանց բա-  
րեկամաց , առանց զիս սիրող օրիորդի մը —  
իմ տխուր անմխիթար տանս մէջ՝ որն որ մի  
միայն քու գեղեցկութիւնդ կրնայ արքայու-  
թիւն մը դարձնել :

ՄԱՐԿ . Ի՞նչ , զիս քեզի կի՛ն ընել . ինձի  
պէս խեղճ խոնարհ աղջիկ մը երեւելի իշխա-  
նի մը կիին :

ՓՕՍԹ . Ո՛Տ, մի՛ երջանկութեան յոյսերս  
փճացներ . քու տեսքդ իմ սիրտս կը վառէ ,  
մի՛ կ'աղաչեմ , մի՛ զրկեր զիս այդ երջանկու-  
թենէն , ապա թէ ոչ՝ կը մեռնիմ :

ՄԱՐԿ . Չէ՛ , չէ՛ — մի՛ այդ մեռնելու խօսքն  
ըներ . ես կը վախնամ այդ պիտի խօսքեր լսե-  
լէ . ինքզինքդ մեռցներ՞ :

ՓՕՍԹ . ( ծնկան վրայ ) Ո՛Տ, Մարկրիտ . . .

ՄԱՐԿ . Ժամանակն ուշ է , գիշերուան ցօ-  
ղը իջնալ սկսաւ . ( տարի է՛լէլէ : )

ՍԻՊԵԼ . ( ծառին ղշ , աղաղակելով ) Ո՛Տ, դժու-  
խային վհուկ . . .

ՄԱՐԿ . ( զարհուրեալ ապրին անդին հը վաղէ . )  
Հոս մեր մօտը մարդ մը կայ կարծեմ :

ՓՕՍԹ . Չէ , սիրելիդ իմ , չէ , մի՛ վախնար .  
— Մարկը իտ , միայն մէկ շուտոյ խօսք մը :

ՄԱՐԿ . Չէ , թո՛ղ զիս : ( Կ'երևայ ծաղեկ ճը  
հը Բրջե՛տ : )

ՓՕՍԹ . Ի՛նչ կ'ընես հոն :

ՄԱՐԿ . Եւ ոչ ինչ , ( ծաղեկին արեւ-նէրը մե-  
կէ մէկէ Բրջե՛տը , մեհոստ ) զիս կը սիրէ . չէ՛  
— այո՛ — չէ՛ — այո՛ — չէ՛ ( Վերջին արեւ-նէրը  
Բրջե՛տը ) այո՛ , զիս կը սիրէ :

ՓՕՍԹ . Սիրելիդ իմ Մարկը իտ , ( հը Գրէ )

ՍԻՊԵԼ . ( ծառին մէջ ) Ո՛ւհ , ո՛ւհ , ո՛ւհ :

ՄԱՐԿ . Մեղի մօտ մարդ կայ կարծեմ :

ՓՕՍԹ . ( ապրին անդին կ'երևայ հը նայի ) Չէ՛ ,  
մարդ չկայ :

ՄԱՐԿ . ( խնդալով հը վաղէ կ'երևայ ծառերուն  
էտին հը ծածկոստ : )

ՓՕՍԹ . ( ապրին Գալով ) Մարդ չկայ , հէ՛ ,  
ո՛ւր գացեր է . ( Մարկը իտ հը խնդայ ) հո՛ս ես ,  
( որեւ 'ի ծառերուն կ'երևայ — Մարկը իտ եղած  
պեղը հը ի՛նչ . ) չէ՛ , հոս չէ՛ , ( Մարկը իտ խրճի-  
նին էտէ — հը պահարտ — Պօսթ խրճի՛նին ներս հը  
ճանայ ) հոս ալ չէ . ( Պօսթ դարձեալ ծառերուն  
էտէ — հը նայի՛ շփոնար : Մարկը իտ խնդալով խրճի-  
նին էտէ — դարս կ'ելլէ իտեղէլ — Պօսթ  
չիտը հը Բա՛նէ : )

ՄԱՐԿ . Ա՛Տ :

ՓՕՍԹ . Բռնեցի՛ :

ՄԱՐԿ . Թո՛ղ զիս , երթամ : ( Խրճիւի մանու  
գրանիւնէրոնն հ'Տօրէնայ : )

ՓՕՍԹ . ( Մէկ քանի անգամ զինքը գրէլէն ու  
պագնէլէն վերջը ծննդան վրայ եկած ) Մարկրիս ,  
դժամ իմ վրաս , ի՞նչու կը վախնաս . եկու  
ինձի կին եղիր , ես ալ քեզի էրիկ , զքեզ յա-  
ւիտեան սիրող ըլլամ . կը պաղատիմ — կ'ա-  
ղերեմ :

ՄԱՐԿ . Ձէ՛ , չէ՛ , թո՛ղ զիս ալ երթամ պի-  
տի , մնաս բարով ( Փօսիւն շեռէն հ'ապարի իս-  
կոյն խրճիւի կը վաղէ եւ անփշապէս վերադարձանալով  
խրճիւի գրանէն հ'ըսէ ) աղնիւ օտարական զքեզ  
կը սիրեմ : ( Պոռը կը գոցէ — տեսարանը անլէ  
կը Տօրէնայ : )

### ՏԵՍԻՒ ԺԱ .

ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ ու ՄԱՐԹԱ :

ՄԱՐ . ( ՂԱՔԻՍ սերելով ու գգուելով . Մե-  
Քիս ալ Բարկացած ) Պարոն , աղնիւ պարոն , հոս  
սպասէ ինձի , մէկ վայրկեան ժամանակ ասուր  
ինձի , երթամ քիչ մը աղամանդ ժողուեմ ,  
ծրարեմ , եւ երկուքնիս մէկանց թռչինք եր-  
թանք . — ալ քու կզ եմ ես , մինչեւ ցմահ :  
( Խրճիւի կ'երբայ : )

ՄԵՓԻ . Մինչեւ ցմահ , յետոյ , ո՞ւր կ'ու-

դեռ նէ հոն դնա՛ , ես չեմ ուզեր դքեղ . . .

ՓՕՍԹ . Մեֆիսթօֆելեյս , տիկին Մարթան  
առնել վախչելու վրայ էք :

ՄԵՓԻ . Ա՛ն դիս վախցնելու վրայ է , այն  
պէս վախցնել մը վախցուց դիս , որ դրեթէ  
մահուան դուռն հասայ . — տե՛ս թէ վախէս  
մարմինս ի՞նչպէս պաղեցաւ :

ՍԻՊԵԼ . ( Ժառ-ին ՌՂԷն ) Ո՛ւհ , ո՛հ :

ՄԵՓԻ . Հա՛ , հա՛ , ( Երած շար-Բի-ն — Յե-ռ  
հ'երհնցնէ , Սեպել ժառ-ին ՌՂԷն դուրս հ'ելլէ : )

ՍԻՊԵԼ . Ո՛ւր եմ ես , արդեօք արթնո՛ւն եմ  
թէ քուն , այնպէս երազեցի՛ թէ սա ծառին  
մէջ բանասարկուած էի : Աս Մարկրիտին պար-  
տէզն է . կարելի է որ հոս քնացած ըլլամ .  
ի՞նչ ընելու ես ալ չեմ գիտեր : Այն դժոխա-  
յին վհուկը . . . բայց ինչ եւ իցէ շատ ուրախ  
եմ որ ճիշդ ժամանակին արթնցայ , վասն զի  
այնպէս խոստացայ Մարկրիտին , որ մութը  
կոխելուն պէս դամ , զինքը առնեմ , մօրս  
տունը տանիմ :

ՓՕՍԹ . Հէ՛ :

ՄԵՓԻ . Լուսթի՛ւն :

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՄԱՐԹԱ խրճիթէն դուրս կ'ելլէ , ձեռքն ալ մեծ ծրար մը :

ՍԻՊԵԼ . Ա՛հ , ոտքի ձայն կ'առնեմ . ( Խօսար  
ցած ճայնու-լ իջ ) դո՛ւն ես :



ՄԱՐ . Ա, յո՛ւ :

ՍԻՊԵԼ . Չեռքդ տուր ինձի :

ՄԱՐ . Ո՛հ :

ՍԻՊԵԼ . Չեո գիտեր թէ ի՞նչպէս կը սիրեմ  
դքեզ . ( Յեռքը կը պահէ : )

ՄԱՐ . Հապա՛ , ճամբայ ելլանք :


ՍԻՊԵԼ . Ա՛ս կողմէն : ( Պատէն դռնէն դուրս  
է՛լլէն է՛րբնան : )

ՄԵՓԻ . Բարեկամ . ( Տառաճը խրճիճը կը ցցէ ) :

ՓՕՍԹ . Ա՛յ Մարկըիտ խնա՛ է : ( Խրճիճին  
դռնէն՝ որ Մարնա Բայ Յգած է՛նէրս կը ճանէ : )

ՄԵՓԻ . ( Սեպէլին և Մարնային էտէ-էն նա-  
յէլով ) Ի՛մս ալ :

ՎԵՐՉ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ



## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարանն է, փողոց մը — Ետևը եկեղեցի մը, Մարկոսե-  
աին տունը . — Աջ կողմը աղբիւր մը :

### ՏԵՍԻԼ Ա .

Երաժշտութիւն . — բաղմուժիւն աղջկանց՝ որք աղբիւ-  
րէն ջուր կը լեցնեն :

ՏԵԼԵՆ . ( Ա՜ — ձէնէ-վէէ-վ, Խէստ ցած չայնով  
ճ ) Բայց, արդեօք ստոյգ է :

ՃԵՆ . Ա, յո՛, ստոյգ :

ՏԵԼ . Իր աղւորիկ իշխանը դացեր է :

ՃԵՆ . Բայց ոչ մէկը գիտէ թէ ո՞ւր — ( Եր-  
կուսն ալ յարուստ կուգան : )

ՏԵԼ . Երեկ, ան ցած մարդը՝ որ միշտ հետը  
կը պտըտէր, անոր հետ դացեր է :

ԱՂՋԻԿՆԵՐԸ . Իրա՞ւ կ'ըսես, վա՛յ ինձի,  
վո՛ւյ :

ՄԵՏԼԻՆ . Թշուա՛ռ Մարկոսիտ :

ՏԵԼ . Ի՞նչպէս աղւոր թեւ թեւի մտած  
անտառներուն մէջ, գետերուն եզերքը զի-  
րար գգուելով վեր վար կը պտըտէին, եւ սա-  
կայն ես կը գուշակէի, որ սա սէրը յարատե-  
ւութիւն պիտի չունենար մէջերնին :

ՃԵՆ . Մարկոսիտին յոյսը պարապ ելաւ :

ՄԵՏ . Թշուա՛ռ Մարկոսիտ, շատ կը ցա-  
ւիմ իր վրայ :

ՃԵՆ . Կը ցաւի՛ս :

ՀԵԼ . Պուցէ Մէտլինինալ նոյնպիսի դէպք  
մը պատահած ըլլայ , որ սիրտը այսչափ կը  
ցաւի Մարկրիտի համար :

ՄԷՏ . Լուեցէ՛ք , ահաւասիկ թշուառ Սի-  
պել :

ԱՂԶ . Սիպել՛ , օ՛ հօ՛ :

ՏԵՍԻԼ Բ .

ՍԻՊԵԼ կը մանայ — աղջիկները ամենքն ալ կը խնդան :

ԱՂԶ . Ի՞նչպէս էք , Սիպել , ի՞նչպէս էք :

ՀԵԼ . Սիպել , ալ ուրեմն հիմա երջանիկ  
ես , դեղեցիկ իշխանը դայեր է :

ՃԷՆ . Սիպել , յաջողութիւն կը մաղթեմ :

ՀԵԼ . Ալ այսուհետեւ կրնաս Մարկրիտի  
հետ ամուսնանալ : ( Ս.ՂԸ Ե՛նէրը էր խնդան : )

ՃԷՆ . Տարակոյս չ'կայ որ Մարկրիտ չա-  
փազանց ուրախ պիտի ըլլայ դքեզ առնելու :  
( Կը խնդան : )

ՍԻՊԵԼ . Մարկրիտի մեկ նայուածքը ձեր  
ամենքը ծախու կրնայ առնել , նախանձն է  
որ այդ կծու խօսքերն արտասանել կուտայ  
ձեզի :

ԱՂԶ . Հա՛ , հա՛հ , հա՛հ :

ՏԵՍԻԼ Գ .

ՍԻՊԵԼ . Լուութիւն :

ՀԵԼ . ( Բարձրաձայն ) Սիպել իրաւունք ու-

նի այդ խօսքերն ըսելու : Մարկրիտ ինչպէս  
միշտ աղւոր եւ անարատ կոչս մըն է . հա' , հա' ,  
հա' . — մէկը հիմա իրեն հետ պարել ուղենայ՝  
կարծեմ Մարկրիտ չպատասխաներ թէ՛ շնոր-  
հակալ եմ Տէր , ես բնաւ չեմ պարեր :

ՄԱՐԿ . Հէլէ'ն , Պերդ-ա' , ճէնէվիէ'վ , ( Մար-  
կրիտ դէպ ' ե երեւոյ Գացած աստեղը ե-բաստանչե-ր աղ-  
ջիէ աստ-րը վեր կ'առնու , կոնստանտին Մարկրիտին  
դարձնելով . նախաստահան խօսքերով , որոնք ընդ կը  
Ռէնիս աջ եւ աջ կողմէն : )

ՍԻՊԵԼ . ( Մարկրիտին Տօբէնաւով ) Մարկրի'տ :

ՄԱՐԿ . Ո՛հ , Սիպել , դժա' վրաս , ներէ'  
ինձի' . ո՛հ , ի՞նչպէս կը ներդիմ :

ՍԻՊԵԼ . Գիտեմ որ կը ներդիս , սակայն ըսէ' ,  
ի՞նչ կրնամ ընել քու վրէժդ առնելու համար :

ՄԱՐԿ . Լո՛ւու , ըն'ու , մի' այդպէս խօսիր ,  
աղէկ գիտեմ որ այն անձը զիս կը սիրէ , գի-  
տեմ որ այն սոսկալի մարդուն հետ մէկտեղ  
հեռացեր է ասկէց , բայց տարակոյս չունիմ որ  
քիչ ատենէն պիտի դառնայ :

ՍԻՊԵԼ . Եւ այն անիծից ծնունդ սատա-  
նայադ էմ անձը . . . :

ՄԱՐԿ . Ո՛հ , Գիտե՛ս թէ այդ թշուառա-  
կանին մէկ նայուածքն ի՞նչ աստիճան սար-  
սափեցուց զիս , եւ ես ամենեւին այդ մար-  
դուն աղօթելը չ'տեսայ — ո՛հ , թո՛ղ որ եր-  
թամիմ մեղացս համար աղօթեմ եւ համբե-

բուժեամբ խմ ծանր պատիժներս կրեմ: (Նե-  
ղեցին է'երբայ:)

ՍԻՊԵԼ. Ո՛հ, այդ դժոխային վհուկը . . .  
(պոռապուկ)

ՏԵՍԻՒ Գ.

ՄԸՐԹԱ կը վաղէ կուգայ:

ՄԱՐ. Միպե՛լ, Միպե՛լ:

ՍԻՊԵԼ. Կորի՛ր, գնա քովէս չար ծնունդ:

ՄԱՐ. Պիտեմ որ զիս չես սիրեր, բայց  
հող չէ — Մարկրիտը աղատէ:

ՍԻՊԵԼ. Ուսկի՞ց, եւ ի՞նչ բանէ աղատեմ  
Մարկրիտը:

ՄԱՐ. Վալէնթայնէն:

ՍԻՊԵԼ. Մի՛թէ Վալէնթայն դարձե՛ր է:

ՄԱՐ. Այո՛, դեռ մէկ վայրկեան մը չկայ,  
որ փողոցին անդիս ծայրը տեսայ զինքը:

ՍԻՊԵԼ. Մի՛թէ լսե՞ց . . .

ՄԱՐ. Տակաւին չէ լսած, բայց դրացինե-  
րուն բերանը բաց է, վախնամ որ շուտով պի-  
տի խմանայ. ա՛հ, ի՞նչ ընենք. — ահաւասիկ  
Վալէնթայն հոս կուգայ. ա՛հ, Միպե՛լ, դուն  
խօսէ իրեն հետ. ի՞նչ կ'ուզես ըսէ, քաղա-  
քէն դուրս պարտելու գնաց ըսէ, վերջապէս  
բան մը ըսէ. — ա՛հ, ահաւասիկ հասաւ:

ՍԻՊԵԼ. Ի՞նչ ըսեմ արդեօք, եւ ի՞նչպէս ը-  
սեմ: (Վալէնթայն գետաբանին ետին է'երէէ:)

Երբ վերջանան պատերազմք  
Դադրին սուրեր, հանգչին սաղմք  
Եւ սիրուհւոյդ ի շրթանց  
Ս. քրտանցըդ վարձ :

ՍԻՊԵԼ . Վալէնթայնն է , անտարակոյս  
ինքն է :

ՏԵՍԻԼ Ե .

ՎԱԼԷՆԹԱՅՆ ներս կը մտնայ երգելով :

Յարեանց դաշտէն հեռացիր ,  
Հայրենեացդ ծոց դարձիր :

(ՏԵՍԵԼԻՉ ՎՍԵՊԵԼ) Ի՞նչ , Սիպել , (ԳՐԷԼԻՉ  
ՎՍԵՊԵԼ) ազնիւ Սիպել — կը զարմանա՞ս իմ  
այսչափ շուտ դարձս տեսնելով . այո՛ , Սի-  
պել , խաղաղութիւնն հաստատուեցաւ , եւ  
ես պատերազմի դաշտը թողլով ահա դար-  
ձայ իմ հայրենիքս . ի՞նչպէս է Մարկրիտ , ո՞ր  
չափ պիտի զարմանայ արդեօք « Վալէնթայն  
եղբայր — Մարկրիտ քոյրս » ըսելով զիրար  
պիտի գրկենք : Ո՛ւր է Մարկրիտս . — ես չեմ  
կրնար համբերել — կ'ուզեմ ժամ յառաջ  
զինքը տեսնել եւ գրկել : Սիպել դու ալ մեծ  
պատիւ բրած պիտի ըլլաս , եթէ հաճիս մե-  
զի հետ ճաշել , եւ ես ամենայն հաճութեամբ  
յանձն կ'առնում պատերազմին մէջ զլիսուս  
պատահած գէպքերը ձեզի պատմելու : Է՛յ ,  
Սիպել , ըսէ՛ նայինք , ի՞նչպէս վարուեցար

Մարկրիտիս հետ խմ բացակայութեանս ա-  
տեն, միժէ որոշեցի՞ք օրը . . .

ՍԻՊԵԼ, • Օրը —

ՎԱԼ, • Ո՛հ, գիտեմ որ դուն խոնարհ անձ  
մի ես — ինքզինքդ Մարկրիտին արժանի չես  
համարիր . լա՛ւ . դուցէ քու խորհուրդդ ու-  
ղիղ է : Չկայ մարդ աշխարհիս վրայ, որ ար-  
ժանի ըլլայ Մարկրիտի . — բայց կը խոստա-  
նամ որ միայն դուն պիտի առնես Մարկրիտը :

ՍԻՊԵԼ, • Ուրիշ մէկ առթի մը թողունք այդ  
խօսակցութիւնը :

ՎԱԼ, • Շատ լաւ : (Դէպ 'ի ստան երևաւ էն  
չէ-ացնէ :)

ՍԻՊԵԼ, • Ո՛ւր կ'երթաք :

ՎԱԼ, • Ուր կ'երթա՛մ, Մարկրիտը գրկելու  
ու համբոյրներովս զինքը ձանձրացնելու :

ՍԻՊԵԼ, • Չէ, չէ, կ'աղաչեմ մի՛ երթաք :

ՎԱԼ, • Ինչո՞ւ համար, միժէ Մարկրիտ  
տունը չէ :

ՍԻՊԵԼ, • Չէ՛ — այո՛ — չէ՛ :

ՎԱԼ, • Շատ լաւ, ուրեմն սպասեմ իր դա-  
լըստեանը :

ՍԻՊԵԼ, • Բայց —

ՎԱԼ, • Բայց, ի՞նչ :

ՍԻՊԵԼ, • Լաւ չեմ գիտեր, թէ երբ կը դառ-  
նայ :

ՎԱԼ, • Լաւ չես գիտեր — Սիպել, քու դէմ՝

քից վրայ այլայլութիւն մը կը տեսնեմ, ինչո՞ւ ձայնդ կը նուազի — եւ ի՞նչու համար ձեռքերդ կը դողդղանն : Արեւոյ ինծմէ կը դարձնե՛ս, ո՛վ երկինք, խօսէ՛, ի՞նչ կայ. (Բընէլ Վեյլ) պատմէ ինծի, դուրցէ կը հրամայեմ, մի՛թէ քոյրս — մեռած է :

ՍԻՊԵԼ. Մեռած — չէ՛ :

ՎԱԼ. Արեմն, ի՞նչ : — Սիպել — սիրելի բարեկամս — ընկերակիցս, խօսէ՛, ի՞նչ :

ՍԻՊԵԼ. Ա՛հ, Վալէնթայն, թողութիւն տա՛ւր իրեն, 'ի յիշատակ մեռեալ մօրդ կ'ազակեմ, ներում շնորհեցէք այդ աղջկան :

ՎԱԼ. Ներում շնորհե՛մ — Մարկրիտ — քոյր իմ — մի՛թէ կարելի՛ է — Սիպել, դիտեմ որ դուն զինքը, թշուառութեամբ դատապարտել կ'ուզես — բայց — Մարկրիտ, (հանչելով — դէպ 'ի գոն երեւո՛վ) :

ՍԻՊԵԼ. (Բընէլ Վեյլ) Վալէնթայն :

ՎԱԼ. Մարկրիտ, (Սիպելին Յեռոսէն ազատելով, արագորովեամբ ինչ շատ արագ գոնէն ներս ինչ հոննայ :)

ՍԻՊԵԼ. Արթամ համոզեմ Մարկրիտը, որ չըլլայ թէ եղբորը աչքին երեւնայ : (Նէշէնին ինչ հոննայ :)



ՏԵՍԻԼ Զ .

Եկեղեցական նուագարանի ձայն կը լսուի — ՄԷՖԻՄ-  
ԹՕՓԵԼԵՍ կուգայ , ձեռքը կ'երկնայնէ տեսարանը կը  
մթննայ , և եկեղեցւոյն պատերը կը բացուին , եկեղեց-  
ւոյն մէջի կողմը սոյժառ կ'երեւնայ , արարողութեան  
հաղորդութեան մասին , Ժողովուրդը ծնկան վրայ եկած ,  
որոնց մէջէն կ'երեւնայ ՄԱՐԿՐԻՏ , որ երեսի վրայ ին-  
կած կ'աղօթէ :

ՄԵՓԻ . Ողի՛ք խաւարի , շրջապատեցէք զին-  
քը , ալ Մարկրիտ ձերն է :

ՍԱՏԱՆԱՅԻ . ( Տեսարանին յաստիւն ) Մար-  
կրի՛տ :

ՄԱՐԿ . ( Երեւնալով եւր Բէ դէնքը կը հաշէն կը  
բանին ) Ո՛հ , զօրութիւնք երկնայի՛ն , պաշտ-  
պանեցէ՛ք զիս :

ՍԱՏԱՆԱՅԻ . Մարկրի՛տ :

( Եկեղեցւոյն նուագարանը կը լսուի — հանտանց  
չայնէր էրգէն — տեսարանը լուսատուր : )

Սպասենք յուսով մեր մեղանայ թողութեան ,  
թէ մարտնչինք դէմ չար ոգւոյն զօրութեան .  
Զի զթութիւնն երկնից շնորհացն է նըշան :

ՄԱՐԿ . ( Յոսով ) Ար լսե՛մ , կը լսե՛մ :

( Երգ Սասանանայից տեսարանին յաստիւն — տեսա-  
րանը ճաշ : )

Ի զուր ճգնիս խոյս տալ կուսիլ ընդդէմ մեզ ,  
Դու մերն ես

Եկուր , փութա՛ , պատուհասներ սպասեն քեզ :  
Դու մերն ես

( Մարկրիտ ցնորեալ գեպինը կէննայ : )

( Կանանց շայնէր հերգէն : )

Սպասենք յուսով :

ՄԵՓԻ . Չե՞րք հ'երկնցնէ , եկեղեց-ոյն պատը  
հը Գոյոտի — Ինչն ալ հը Տեհնի : )

ՏԵՍԻԼ Է .

ՎԱԼԷՆԹԱՅՆ տունէն դուրս կ'ելլէ կուգայ :

ՎԱԼ . Բայց ո՞ւր է Մարկրիտ , եւ արդեօք  
ո՞ւր է ծածկուեր , ա՛հ , ինչու համար պա-  
տերազմին դաշտին մէջ չմեռայ , այն ատեն  
կրնայի առանց ամօթոյ մեռնիլ , եւ թէ հարկ  
ըլլայ աշխարհիս չորս կողմը պտըտիլ , դար-  
ձեալ պիտի գտնեմ ես այն անձը : ( Տե՛սարանը  
հը Տըննայ : )

ՏԵՍԻԼ Ը .

Երաժշտութիւն — ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ և ՓՕՍԹ :

ՄԵՓԻ . Բայց ի՞նչու կը տրտընջաս . քեզի  
դէշ խրատ տալուս համար — բարի խրատ  
տալը իմ գործս չէ՛ :

ՎԱԼ . Ո՞վ են ասոնք : ( Յա՛տաջ Գալու՛ւ )

ՓՕՍԹ . Ո՞վ է այդ անձը :

ՄԵՓԻ . Վժբազդ անձ մը — երթամ հետը  
խօսակցիմ . ո՛հ , տէր իմ , հաւատա՛ , սէր մը  
կ'զգամ քու վրադ :

ՎԱԼ . Ուրեմն գիտէք որ ես — իր եղբայրն  
եմ , շնորհակալ եմ տէր իմ , ձեր սիրոյն , բայց

դիտցած ըլլաք որ ես զօրական մըն եմ, եւ ազէկ դիտեմ վրէժ առնելու կերպը :

ՄԵՓԻ . Ար սիրեմ այդ սգիդ :

ՎԱԼ . Ես կը դանսամ այն շարագործը :

ՄԵՓԻ . Ապահով եղիք, խիստ շուտ պիտի դանէք զինքը — եւ պիտի ճանչնաք տեսնելնուդ պէս :

ՎԱԼ . Շնորհակալ եմ — ձեռքդ, պարոն . (Երած շոտ-Լի-ն — Վալէնթայն Մեֆիսի Յեռ-բէ կը Լ-Լ-ձէ — Փօսթին քովը կ'երթայ, և Փօսթ Վալէնթայնը կ'առնէ — Վալէնթայն կը հեռու-էրէն . Վերջապէս ճակատ առ ճակատ կը կենան .) այն է . (Երկո-բը Ռեյանց սորերնին կը քաշէն — Երած շոտ-Լի-ն :)

ՄԵՓԻ . (սորը կը քաշէ) Բարի է . ես ձեր երկուքին ալ բարեկամն եմ . հա', բժիշկ, քեզ նայիմ, հը', հը', մի' այդ չափ տաքնար . ծանր, ծանր, հա', հը', թեւին վրայէն . (Մեֆիս Փօսթին քովը կ'երթայ խօսելու :)

ՓՕՍԹ . (Ժեժիո-եւոձ) Թո՛ղ զիս :

ՄԵՓԻ . Մի' վախնար, ըսես չըսես, ես դքեզ չեմ թողուր :

ՎԱԼ . Ուժոս ինչո՞ւ կը նուաղի արդեօք :

ՄԵՓԻ . Հանդարտութեամբ, բժիշկ, հանդարտութեամբ, մի' աճապարեք :

ՓՕՍԹ . Կորի' քովէս :

ՄԵՓԻ . Ա՛հ, ես այդ վատ բնութիւնը չու-

նիմ, որ բարեկամս տառապանաց եւ դժ-  
ուարութեանց մէջ թողում:

ԱԼԼ. Կարծես թէ սատանայական զօրու-  
թիւնք կ'օգնեն իրեն:

ՄԵՓԻ. Շատ ուղիղ խօսեցար. հա' բժիշկ:  
(ՄԵՓԻՍ Առաքելական շեռտէն հերոսով ճշ ստ-բը  
էը եւէ — Փօսթ էը դարնէ զԱռաքելական — Առաքել-  
ական էը փոստ-ի գեղեցիկ, Փօսթ գլխաւն հողճը  
հայնած:)

ՓՕՍԹ. Մեռցուցի':

ՄԵՓԻ. Այո' — կարծեմ մեռցուցիր:

ՓՕՍԹ. Սակայն, աս մեռամարտութիւն  
չէր — աս մարդասպանութիւն եղաւ:

ՄԵՓԻ. Լաւ. այսպէս կամ այնպէս, մեծ  
տարբերութիւն մը չկայ. գրեթէ երկուքը մէկ  
է, միայն անունները դատ են: Բայց օ'ն մեկ-  
նինք ասկից, ասլա թէ ոչ՝ ոստիկանութիւնը  
հիմա վրայ կը հասնի, թէպէտ եւ սատանայ  
եմ, բայց ես ալ ոստիկանութեան օրէնքներէն  
կը վախնամ: (Կը Տէննն:)

ԱԼԼ. Ա՛հ, մահացու է հարուածը:

### ՏԵՍԻԼ Թ.

Երսժշտութիւն — ՍԻՊԵԼ, ՄԱՐԿՐԻՏ ու քաղաքացիք  
եկեղեցիէն կը վազեն — Պատկեր:

ՍԻՊԵԼ. Ի՛նչ է այս. (Չափի ճը լոյսը Առաքել-  
ական էրեւին Լրաց էը ծագի:)

ՄԱՐԿ . Եղբայրս . ( Տնկան Վրայ Գալով )

ԵՄԵՆԲԸ . Վալենթինայն .

ՎԱ . ( Գլխիւ վեր վերջնեւ ) Մարկրիս —  
 լակ' իմ վերջին խօսքերս . -- դուն' վաս , շար  
 կեանք մը վարել սկսեր ես , եւ նոյնպէս պի-  
 տի շարունակեա այդ ընթացքդ գիտեմ . այս  
 օրս' մէկ ծանր վտանգ մը , մահ մը բերաւ .  
 վաղուան օրն ուրիշ մը պիտի բերէ , ալ այդ  
 փակուկ . . . ձեռքերդ պիտի . . . չկրնան . . .  
 գործել : Անօթու թիւնը . . . պիտի շճանրանայ  
 քու վրայ . . . դուն պիտի ապրիս . . . այս' ,  
 պիտի ապրիս , եւ մեծ շուայլութեամբ : Քի-  
 տեմ . . . որ ծառաներ . . . սպասաւորներ . . .  
 աղամանդներ . . . եւ այս ամենը դքեղ դժո-  
 խաց ծառայեցնելու համար աշխարհիս վրայ  
 . . . այս' , անոնց ամենն ալ պիտի ունենաս . . .  
 պիտի վայելեա . . . քու հօրդ տունը , քու  
 մօրդ գերեզմանը պիտի ծախեա , գիտեմ . . .  
 քան թէ այդ աղամանդներէն բաժնուիս . . .  
 ( Մարկրիս Վրայի արածանդները էլ հանէ էլ նեղէ . )  
 պատիւն ու առաքինութիւնը պիտի փախչին  
 քու վրայէդ . . . թշուա՛ւ . . .

ՄԱՐԿ . Գթութիւն , դթութիւն :

ՎԱ . ( ա-եւէ նո-աղ շայնով ) Գոհութիւն  
 Աստուծոյ որ մայրս չապրիր' այս օրս տես-  
 նելու համար . ( Ինչպէս Վեր վերջնեւ ) Մարկ-  
 րիս , դուն մեռցուցիր զիս , դուն քու եղբայ-

ըրդ մեռցուցիր, ուրեմն ա՛ռ, ընդունէ՛ իմ՝  
 մահուան անէծքս: (Երած շատ-Լէան — է՛ իյնայ  
 հը Ռեանի — Մարհրիտ Բազմո-Լէան Լէ-Երո-ն Ռջ  
 է՛ իյնայ, որոնք հը Վերցնեն հը որանին զԱլալէն Լայն .  
 — Ռայն Մարհրիտ Լ Սեպեւ հը Բնան որեւարանին  
 Վրայ: )

ՄԱՐԿ . ( ունէնդրո-Լէամբ ) Լ՛ո՛ւռ, ը՛ւ՛ռ,  
 սիրտս կը խօսի ինձի որ — ան — ան է:

ՏԵՍԻԿ Ժ

ՓՕՍԹ ներս կը մանայ — ՄԱՐԿԻՏ ինքզինքը կը նեակ  
 Փօսթի թեւերուն մէջ:

ՓՕՍԹ . Մարկրի՛տ:

ՄԱՐԿ . Ես գիտէի որ պիտի դատնաս նս-  
 րէն . ( Գրէւ Վ ) տակաւին զիս կը սիրես, այն  
 պէս չէ՞:

ՓՕՍԹ . Ես քեզ պիտի չթողում որ ինձմէ  
 բաժնուիս, Մարկրիտ . ես եմ բոլոր քու ցա-  
 ւերուդ եւ տառապանացդ պատճառը . խըղ-  
 ճիս խայթերը սիրտս կը տազնապեն . ներէ՛,  
 բայց սիրէ՛ ու ինձի հետ եկուր:

ՄԱՐԿ . ( Խէնդի պէս ) Խօսէ՛ — խօսէ՛ . մէկ-  
 տեղ պիտի երթա՞նք . տես՛ այն տեղը՝ ուր  
 առաջին անգամ զիրար տեսանք: Եւ տես  
 պարտիզիս անուշիկ ծաղիկները — տես այս  
 ծառազարդ ճամբան՝ ուր դուն առաջին ան-  
 գամ « գրեղ կը սիրեմ » այս բառերը արտա-  
 սանեցիր:

ՓՕՍԹ . Ո՛վ յաւիտենական զօրութիւնք ,  
արդեօք ցնորե՞ր է այս աղջիկը :

ՄԱՐԿ . Հիմա կրնամ երջանիկ մեռնիլ —  
ինչու որ դարձար դուն :

ՏԵՍԻԼ ԺԱ .

ՄԻՊԵԼ վերջին խօսքերը եղած ատեն վաղէլով կուգայ :

ՄԻՊԵԼ . ( ~~առ~~ Փօսթ ) Փախի՛ր — փախի՛ր ,  
աստիկանութիւնը՝ վալէնթայնը մեռցնողը  
կը փնտռէ :

ՓՕՍԹ . Սիրելիդ իմ Մարկրիտ , եկուր միա-  
տեղ փախչինք այս տեղէս : Ես ձեր ունիմ՝  
որ մեզի կ'սպասեն , եկո՛ւր փախչինք , քանի  
որ ժամանակը դեռ ուշ չէ :

ՄԱՐԿ . Ի՞նչ սիրուն աղամանդներ . բայց  
ես իրաւունք չունի տուփը բանալու , թէ որ  
զիս տեսաւ . ա՛հ , այս զարդը իմ կուրծքս  
կ'այրէ՛ . ան քու ձեռքերդ իմիններս . ( Յե՛տե  
կը \*աշէ Փօսթին յե՛տե՛ն ՌՂԷ՛ն ) ա՛հ , ի՞նչ կը  
տեսնեմ , ձեռքերս արիւնաթաթա՛խ :

ՓՕՍԹ . Արիւնաթաթա՛խ :

ՏԵՍԻԼ ԺԲ .

ՄԵՓԻՍԹՕՓԵԼԵՍ կերեւայ :

ՄԱՐԿ . Դո՞ւն ես իմ եղբայրս մեռցնողը :  
( Կ'էնայ կը Ռե՛նի : )

ՄԵՓԻ . Ս.յո՛, հիմա դուք երկուքնիդ ալ  
խնս էք , օ՛ն բժիշկ :

ՓՕՍԹ . Կորի՛, աչքիս առջևէն սատանայ :  
( Սորը իւր աստիճան — Մեքէս յետոք երկնցոցածին  
պէս , Տօսնին յետոքն սորը կ'էջնայ : )

ՄԵՓԻ . Խեղքդ գլուխդ ժողուէ բժիշկ , մի՛  
այդ չափ ցնորիր . ( Տօսնին ընդէն իւր Բունէ աստի-  
ճանէն իւր դարձնէ . ) Մարկրիան ալ խնս է :  
( Կը յաստատանայ դէպ 'ի Մարկրիանի դեմքը , եսկ է-  
կեղեցոյն պատը իւր Բացոտ , եւ սորք հոգի ճը լո-  
սածաճանչ կերպարանօք Մարկրիանի դեմքին շրայօք  
պաշտպանողական կեանքօք ընդէն իւր . Մե-  
քէս սորք հոգին տեսածին պէս՝ երկնցածո-  
ւեաճք եւս եւս աստիճան , իւր շարէ Տօսնին իւր  
իւր Բունէ . հոգին եւ Մարկրիանի դեմքը ներս իւր աս-  
տիճան , եւ եկեղեցոյն պատը իւր Բացոտ : Ներսը  
ստիճաներգոտնէան շայնէքը իւր կ'էջնան : )

ՄԵՓԻ . Մա՛հ , եւ . . . ներէ ինծի բարե-  
կամ , բայց դիտես արդեօք թէ այսպէս  
պղտիկ բայց փափուկ արարած մը , իմ բեր-  
նիս պատառը , երկնայնոց յափշտակել տալս  
որչափ հայհոյանք կը պատճառէ ինծի , սակայն  
ի՞նչ օգուտ իմ հայհոյելս , կորուսի ես այն աղ-  
նիւ որսը . հիմայ քեզմով միայն դո՛հ ըլլալ կը  
մնայ ինծի , թէեւ ակամայ ( Տօսնը իւր Բունէ  
գեղեցիկ իւր զարնէ — տեսարանը ճառ : երգ սաստ-  
նայից իւր լառնէ : )



ՖՕՍԹ . Ա՛Ն , դ[թու]թի՛ւն , դ[թու]թի՛ւն :

ՄԵՓԻ . Պա՛Ն , դ[թու]թի՛ւն , ցնորեալ խօսք , դուն ինքնին հաւանութիւն տուիր , պարտք է փոխարէնն վճարել , կը հասկնա՞ս արդեօք , սիրելիդ իմ Ծօս[թ] . ( Ծօսելն գլխունն կը զարնէ և կը հրէ խորնն ճշ . ուսկէց կարծիք բոցեր դուրս կ'արջկէն . ՄեՔիս և Ծօսել բոցերունն ճշկէն անշայտ կըլլան : )

Երաժշտութեան եղանակը կը գործուի : Եկեղեցին , պատը և առն շինուածները ծանր , ծանր , անշայտ կ'ըլլան , Ռայն պայծառ երկնից հորեղան ճը կը տեսնուի , որունն ճշ Մարկրիտի ոգին սուրբ հոգիներով պատած , ծանր ծանր վեր կ'ելլէ — և բաւանիան վեր հասած — պատկեր :


ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻՋՆԱՅ

Վ Ե Ր Զ













1237

2013

